




2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՌԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ






2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ






2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

52 միջոցառումների կատարողականը տոկոսային հարաբերակցությամբ





2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՈԼՈՐՏՆԵՐՈՎ





ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 1

Ենթակետ 1. Միջազգային պարտավորությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների, Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ), « Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցների, « արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հաշվետվությունների հաշվառմամբ մշակվել է Քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը:

Ենթակետ 2. Նախագիծը դրվել է շրջանառության մեջ, կազմակերպվել են հանրային քննարկումներ, Նախագիծը ներկայացվել է Ազգային ժողով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

« քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մշակվել է: Նախագիծը դրվել է շրջանառության մեջ և ուղարկվել շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Միաժամանակ, 2019 թվականի նոյեմբերի 13-ին Նախագիծը դրվել է հանրային քննարկման իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am): Շրջանառության մեջ դրված Նախագիծը 2019 թվականի դեկտեմբերի 26-ին ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

Միաժամանակ, հարկ է փաստել, որ պարբերաբար կազմակերպվել են մի շարք քննարկումներ « քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերը մշակող աշխատանքային խմբերի, ինչպես նաև շահագրգիռ այլ գերատեսչությունների հետ՝ մի դեպքում՝ « քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի հետ կարգավորումների միասնականությունն ապահովելու, մյուս դեպքում՝ նախագծային նորարարությունները քննարկելու նպատակով: Ներկայումս իրականացվում են Նախագծի ամփոփման աշխատանքները:

Հարկ է ընդգծել այն, որ Նախագծի հետագա ընթացքն ուղղակիորեն պայմանավորված է « քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի նախագծերի վերջնական տարբերակների առկայությամբ, քանզի այս երեք նախագծերը օրգանական միասնություն են կազմում և բխում են մեկը մյուսից: Նշված հանգամանքի վերաբերյալ բարձրաձայնվել է նաև « վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ 2020 թվականի մայիսի 20-ին կայացած՝ « կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով « արդարադատության նախարարության 2019 թվականի կատարած միջոցառումների մասին խորհրդակցության ընթացքում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ Ազգային ժողովի կողմից « քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի ընդունմանը զուգահեռ Նախագիծը կբերվի վերջնական տեսքի և կրկին կներկայացվի « վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 2

Ենթակետ 1. Մշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Ենթակետ 2. Նախագիծը դրվել է շրջանառության մեջ:

Ենթակետ 3. Նախագծի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ:

Ենթակետ 4. Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ:

Մշակվել է՝

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից ստանալու ու նրանց մոտ պահելն արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկում ավելացնել նաև ցանկացած տեսակի դեղ, եթե առկա չէ բժշկի ցուցումը,

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի արդյունքում կալանավորված անձանց, դատապարտյալների և վերջիններիս մոտ հանձնուքներ, ծանրոցներ և անձնական իրեր բերող անձանց համար ստեղծվել են իրենց իրավունքի իրացման համար ավելի բարենպաստ պայմաններ, քրեակատարողական հիմնարկներում բացառվել են արհեստական հերթեր առաջանալու ռիսկերը, իսկ քրեակատարողական ծառայողներն ազատվել են ձևական բնույթի գործողություններ կատարելու ավելորդ ծանրաբեռնվածությունից,

3) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որով նախատեսվում է իրենց կյանքին, առողջությանը վնաս պատճառելու հակում ունեցող դատապարտյալներին և կալանավորված անձանց՝ կոշկաքուղեր, սավան, գոտի, պարան և կյանքից զրկելու համար օգտագործվող հնարավոր այլ միջոցներին հասանելիությունը սահմանափակելու հնարավորություն՝ այդ անձանց՝ որպես բացասական հակում ունեցող, հաշվառման վերցնելուց մինչև նման հաշվառումից հանելն ընկած ժամանակահատվածում:

Վերոնշյալ նախագծերը համապատասխանաբար դրվել են շրջանառության մեջ, այդ թվում՝ ներկայացվել հանրային քննարկման (<https://www.e-draft.am/projects/2126>, <https://www.e-draft.am/projects/2122>, <https://www.e-draft.am/projects/2556>):

Մշակվել է նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը նախատեսվում է դնել շրջանառության մեջ:



ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 3

Ենթակետ 1. Վերանայվել է կալանավորված անձանց և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Վերանայվել է «Արդարադատության նախարարի 2016 թվականի հուլիսի 13-ի N 279-Ն հրամանը (սույն կետում այսուհետ՝ Հրաման)՝ առաջնահերթությունը տալով ազատությունից զրկված անձանց կարանտինային բաժանմունք ընդունելու և այնտեղ պահելու ընթացքում նրանց հետ տարվող աշխատանքների կարգավորումներին: Հարկ է նշել, որ, ի շարս այլնի, Հրամանի վերանայման արդյունքներով «Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում մշակվել և «Արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 513-Լ հրամանով հաստատվել է Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը (սույն կետում այսուհետ՝ Ռազմավարություն), որով թիրախավորվել են ոլորտի առավել կարևոր խնդիրները: Այս առումով ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Ռազմավարությամբ սահմանված միջոցառումների շրջանակներում, ի թիվս այլնի, նախատեսվում է իրականացնել Հրամանի ամբողջական վերանայում, որը կիրականացվի 2021 թվականի երկրորդ կիսամյակում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 4

Ենթակետ 1. Մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծ.

Ենթակետ 2. Նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ.

Ենթակետ 3. Նախագիծն ընդունվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և 2020 թվականի հուլիսի 10-ին ՀՀ արդարադատության նախարարի կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի N 34-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ արդարադատության նախարարի N 249-Ն հրամանի նախագիծը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- o **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- o Կատարված է մեծ մասամբ
- o Կատարված է մասնակի
- o Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 5

Ենթակետ 1. Մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը հաստատելու մասին ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծ:

Ենթակետ 2. Նախագիծը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ:

Ենթակետ 3. Նախագիծն ընդունվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, շրջանառվել և 2020 թվականի մարտի 20-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 18-ի թիվ ՔՀ-66-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 6

Ենթակետ 1. Իրականացվել է կալանավորված անձանց ուղեկցումն ու պահպանությունը կանոնակարգող օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի վերլուծություն, քրեակատարողական ծառայության և ոստիկանության գործառույթների տարանջատման վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

Ենթակետ 2. Վերլուծության արդյունքների հիման վրա անհրաժեշտության դեպքում մշակվել, շրջանառվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել իրավական ակտերի նախագծերի փաթեթ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Կազմվել է ազատությունից զրկված անձանց ուղեկցման և պահպանության գործընթացի վերաբերյալ «Արդարադատության նախարարության կողմից կազմված համապարփակ վերլուծություն, որտեղ ներկայացված են նախորդ տարիների ընթացքում ազատությունից զրկված անձանց ուղեկցումների վիճակագրությունը, «Ոստիկանությունում և «ԱՆ քրեակատարողական ծառայությունում առկա ռեսուրսների վերաբերյալ տեղեկությունը, ստեղծված իրավիճակը, ինչպես նաև առաջարկվող լուծումների տարբերակները, որոնք բխում են նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կատարված եզրահանգումներից: Վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Ըստ այդմ՝ «Ոստիկանության հետ իրականացվել են մի շարք քննարկումներ՝ քննարկման առարկա դարձնելով գործընթացը 3 տարբերակով լուծելու հարցը՝ 1) դատապարտյալների ուղեկցումը պետք է վերապահվի «Քրեակատարողական ծառայությանը, 2) Դատապարտյալների ուղեկցումը պետք է շարունակի իրականացնել «Ոստիկանությունը, 3) Ազատությունից զրկված բոլոր անձանց ուղեկցումը պետք է իրականացնի «Ոստիկանությունը: Քննարկման արդյունքներով ընդունելի տարբերակ է համարվել 1-ին տարբերակը, որի հիմքում դրվել են նաև համապատասխան հաշվարկ-հիմնավորումները:

Որպես ժամանակավոր լուծում՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել նշված գործառույթը «Ոստիկանության ուժերով իրականացնելու վերաբերյալ: Ըստ այդմ՝ պրակտիկ խնդիրները հաղթահարվել են: Հետագայում ֆինանսական միջոցների բաշխման կամ ֆինանսական նոր միջոցների ներգրավմամբ վերջնական կոփտարկվի տարբերակի ընտրության հարցը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 7

Ենթակետ 1. Իրականացվել է քրեակատարողական համակարգի նախորդ 3 տարվա գործունեության ընդհանուր ատղիտ:

Ենթակետ 2. Իրականացվել է քրեակատարողական ծառայության գործունեության ռիսկային ոլորտների ուսումնասիրություն, կարիքների գնահատում:

Ենթակետ 3. Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մշակվել և իրականացվում է կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և կանխարգելմանն ուղղված համալիր ծրագիր:

Ենթակետ 4. Մշակվել է «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով առաջարկվում է քրեականացնել քրեական ենթամշակույթին առնչվող արարքները, և սահմանված կարգով ներկայացվել Ազգային ժողով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներքին ատղիտն հանրային հատվածի կազմակերպության միջոցով կազմակերպելու առնչությամբ հարկ է փաստել, որ ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից հաշվետու ժամանակահատվածում դեռևս լրամշակման փուլում է գտնվել հանրային հատվածի կազմակերպություններում ներքին ատղիտի ծառայության գնման հայտում ներառվող՝ ծառայության բնութագրին և մասնակիցների որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջները (սույն կետում այսուհետ՝ Պահանջներ), ուստի, հանրային հատվածի կազմակերպության միջոցով ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգի ներքին ատղիտը կազմակերպելը ևս օբյեկտիվորեն անհնար է եղել: Հարկ է նշել, որ Պահանջները ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից մշակվելուց և վերջնականորեն հաստատվելուց հետո հայտարարվել է մրցույթ, սակայն որևէ կազմակերպություն հաղթող չի ճանաչվել: Խնդրո առարկա հարցին վերջնական լուծում տալուց հետո ՀՀ արդարադատության նախարարության կողմից կձեռնարկվեն համապատասխան քայլեր քրեակատարողական համակարգի նախորդ 3 տարվա գործունեության ընդհանուր ատղիտ կազմակերպելու ուղղությամբ:

2) Կազմվել է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում կոռուպցիայի դեմ պայքարում գործունեության ռիսկային ոլորտների ուսումնասիրության, կարիքների գնահատման նպատակով իրականացված ուսումնասիրությունների և ներկայացված առաջարկությունների ընդհանրական արդյունքների վերաբերյալ տեղեկանք, որը հիմնված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից վեր հանված կարիքների վրա: Մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկների, այդ թվում՝ նաև առանձին ստորաբաժանումների գործունեության թափանցիկությունն ապահովելու, անազատության մեջ պահվող անձանց վարքագծի և քրեակատարողական ծառայողների (աշխատակիցների) նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու, ծառայող-անազատության մեջ պահվող անձ փոխհարաբերություններում կոռուպցիոն ռիսկերը բացառելու, ինչպես նաև արգելված իրերի ներթափանցումը քրեակատարողական հիմնարկներ կանխելու նպատակով առաջարկվում են խնդրո առարկայի մի շարք լուծումներ (Քրեակատարողական ծառայությունում ստեղծել **օպերատիվ կառավարման կենտրոն, քրեակատարողական հիմնարկների ներքին և արտաքին պահպանության պարագծերում և պահակետերում ներդնել արդի տեսահսկման և ահազանգման համակարգեր, օգտագործել տվիչներ,**



«Արդարադատության նախարարություն»

տեղորոշման (GPRS) սարքեր, ինչպես նաև խլացուցիչներ և այլն), որոնք անհրաժեշտ է կիրառել ողջ քրեակատարողական համակարգում՝ ապահովելով տեսահսկման համակարգի բաղադրիչ տարրերի պարտադիր ներդրումը:

3) Կազմվել է «ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում և քրեակատարողական հիմնարկներում իրականացվող կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և կանխարգելմանն ուղղված համալիր ծրագրի վերաբերյալ կազմված տեղեկանքը: Հարկ է փաստել, որ տեղեկանքում ներառված մի շարք միջոցառումներ արդեն իսկ կյանքի են կոչվել, մասնավորապես՝ 2062 քրեակատարողական ծառայողի աշխատավարձը բարձրացել է շուրջ 30%-ով, իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում քրեակատարողական ծառայության պաշտոնները՝ բացառությամբ քրեակատարողական հիմնարկի պետերի պաշտոնների, զբաղեցվում են մրցույթի արդյունքներով, քրեակատարողական բոլոր հիմնարկներում տեղադրվել են «RAPISCAN ORION 920 CX» ապրանքանիշի անվտանգության ռենտգեն սարքեր, ինչպես նաև «SECUPLUS» մակնիշի անցումային և ձեռքի շարժական դետեկտորներ (մետաղորսիչ սարքեր) և այլն:

4) Քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող՝ 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված ««ԱՆ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-87-Ն օրենքն արդեն իսկ ուժի մեջ է մտել: Օրենքն ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ «Արդարադատության նախարարությունը գործընկեր կառույցների հետ կազմակերպել է քննարկումներ՝ միտված օրենսդրական փոփոխությունները կյանքի կոչելուն: «ԱՆ քրեակատարողական ծառայության տնօրենի, «ԱՆ Ոստիկանապետի, «ԱՆ քննչական կոմիտեի նախագահի, «ԱՆ քրեակատարողական ծառայության պետի և իրավապահ մյուս մարմինների այլ ներկայացուցիչների մասնակցությամբ: Մանրամասն քննարկման արդյունքում նախանշվել են հիմնական անելիքները կազմակերպված հանցավորության առավել վտանգավոր այս դրսևորումների նախականիման, բացահայտման, նման գործերով քննությունների որակի ապահովման, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցների կիրառման ուղղություններով, ինչպես նաև հանցագործության նման դեպքերով քննության տարբեր փուլերում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնող և նախաքննական մարմինների համագործակցության եղանակները, դատավարության մասնակիցների նկատմամբ արդյունավետ պաշտպանության միջոցների շրջանակին վերաբերող խնդիրները:

Քրեական ենթամշակույթին առնչվող հանցավոր արարքներով իրավակիրառ պրակտիկայի միասնականության, ինչպես նաև հանրային իրազեկման ապահովման նպատակով աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել «Արդարադատության ակադեմիայի հետ: Արդյունքում՝ մշակվել է «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ գիտագործնական մեկնաբանությունը, որը երաշխավորվել է տպագրության «Արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից և ուղարկվել շահառու բոլոր գերատեսչություններին: Նշված ուղեցույց-մեկնաբանությունները հրատարակվել են նաև «Արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://justiceacademy.am/#1954>: Ավելին՝ նշված թեմայով «Արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրով նաև նախատեսվել է առանձին դասընթաց:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի



- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 8

Ենթակետ 1. Մշտադիտարկվել է (մոնիթորինգի է ենթարկվել) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգը:

Ենթակետ 2. Մշտադիտարկման (մոնիթորինգի) հիման վրա ներկայացվել է առաջարկություն պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի կատարելագործման անհրաժեշտության վերաբերյալ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Մշտադիտարկման (մոնիթորինգի) հիման վրա կազմվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման գործող համակարգի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ամփոփ տեղեկանք:

Միաժամանակ, հարկ է նշել, որ իրականացված վերլուծության արդյունքները քննարկման առարկա են դարձել ՀՀ քրեական և քրեակատարողական նոր օրենսգրքերի նախագծերը մշակող աշխատանքային խմբերի կողմից՝ անհրաժեշտ լուծումներ մշակելու և օրենսդրական փոփոխություններ նախանշելու նպատակով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 9

Ենթակետ 1. Վերլուծության է ենթարկվել քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման և գնահատման առկա մոդելը՝ համադրելով միջազգային փորձում առկա, արդյունավետ գործող կառավարման և գնահատման մոդելների հետ

Ենթակետ 2. Վերլուծությունը քննարկվել է շահագրգիռ մարմինների հետ՝ քննարկմանը մասնակից դարձնելով նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին

Ենթակետ 3. Քննարկումների հիման վրա մշակվել և ներկայացվել է առաջարկություն քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման և գնահատման մոդելի կատարելագործման վերաբերյալ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Կատարվել է քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման և գնահատման մոդելի արդիականացման վերաբերյալ ուսումնասիրություն (այսուհետ՝ Ուսումնասիրություն), առկա մոդելը համադրվել է միջազգային փորձում առկա, արդյունավետ գործող կառավարման և գնահատման մոդելների հետ, արդյունքները ներկայացվել են «Վարչապետի աշխատակազմ, «Գլխավոր դատախազություն, Մարդու իրավունքների պաշտպանին, ֆինանսների նախարարություն, «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն, «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբին, ոլորտային հասարակական կազմակերպություններին:

Ուսումնասիրության առնչությամբ վերոնշյալ մարմինների և կազմակերպությունների կողմից ստացվել են կարծիքներ և առաջարկություններ, որոնք իրենց բնույթով եղել են բազմաբովանդակ: Նշված կարծիքներն ու առաջարկություններն ամփոփելու, դրանց հիման վրա քրեակատարողական ծառայության և քրեակատարողական հիմնարկների կառավարման և գնահատման մոդելի կատարելագործման վերաբերյալ Վարչապետի աշխատակազմ առաջարկությունների փաթեթ ներկայացնելու կապակցությամբ «Արդարադատության նախարարությունը նախաձեռնել է առցանց հանդիպում՝ վերը նշված շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպման արդյունքներով և լրացուցիչ ուսումնասիրությունների հիման վրա «Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել առաջարկությունների փաթեթ, այդ թվում՝ Ուսումնասիրության լրամշակված տարբերակը:

«Արդարադատության նախարարության և «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կողմից նախատեսվել է մշակել մոդելային փորձնական ծրագրի նախագիծ՝ «Արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում գործարկելու նպատակով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- o ԿԱՏԱՐՎԱԾ Է



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 10

Ենթակետ 1. Դիտարկվել է քրեակատարողական հիմնարկներում սննդի ապահովման, սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացման և հնարավորության դեպքում նաև այլ գործառույթների՝ մասնավոր հատվածին պատվիրակելու (outsourcing) հնարավորության հարցը և ներկայացվել առաջարկություն նշված գործառույթները մասնավոր հատվածին պատվիրակելու նպատակահարմարության վերաբերյալ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2020 թվականի հունիսի 1-ից սկսված ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Պատրաստի սննդից օգտված շահառուների թվաքանակը կազմել է 100%, որն ինքնին հանգեցրել է փոխանցվող հանձնուքների թվի նվազմանը, ինչի արդյունքում թեթևացել է նաև անազատության մեջ պահվող անձանց հարազատների հոգսը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի ապահովման գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու հաշվին հնարավոր է դարձել էականորեն բարձրացնել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ինչպես նաև կատարել ևս մեկ քայլ ազատությունից զրկված անձանց շրջանում խտրականությունը բացառելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, ազատությունից զրկված անձանց շրջանում վերջին տարիների ընթացքում առավել տարածված սիրտ-անոթային, աղեստամոքսային տրակտի, շաքարային դիաբետի, խրոնիկական հեպատիտների, լյարդի ցիռոզի հիվանդությունների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակված միջինացված դիետիկ սննդակարգերը ներառվել են ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում: Այս համատեքստում հարկ է նշել, որ դիետիկ սննդակարգերն ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում ընդգրկելու արդյունքում ներկայումս 66 անձ օգտվում է այդպիսի սննդակարգերից:

Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում սանիտարահամաճարակային միջոցառումների իրականացման գործընթացը մասնավոր հատվածին պատվիրակելու հնարավորության դիտարկմանը, հարկ է փաստել, որ մասնավոր կազմակերպության հետ կնքվել է ախտահանման և մակաբույծների ոչնչացման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 11 (շարունակական)

Ենթակետ 1. Փակվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկները, որի արդյունքում Երևան քաղաքի տարածքում՝ Սիլիկյան թաղամասում, կառուցվել է շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ (200 մահճակալ նախատեսվել է բուժման կարիք ունեցող անձանց համար):

Ենթակետ 2. ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկը ՀՀ ազգային անվտանգության ծառայության վարչական շենքից տեղափոխվել է նախկին «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի մասնաշենք.

Ենթակետ 3. ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկը լուծարվել և ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում կառուցվել է ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայր, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենք.

Ենթակետ 4. ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկը փակվել է, և դրա փոխարեն կառուցվել է 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկ:

Ենթակետ 5. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում ստեղծվել են մինչև 200 լրակազմ ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ:

Ենթակետ 6. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկն ապահովվել է օդափոխության համակարգով:

Ենթակետ 7. ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունները զարգացվել են:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) ՀՀ 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման շրջանակներում (հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N 1212-Ն որոշմամբ) ՀՀ արդարադատության նախարարության կողմից, ի թիվս այլնի, ներկայացվել է «Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, շենքային պայմանների բավարարում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) հայտը, որով նախատեսված է նաև ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների փակման և Երևան քաղաքի տարածքում շուրջ 1200 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկի (շուրջ 200 մահճակալ նախատեսվել է բուժման կարիք ունեցող անձանց համար) կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը: Հատկանշական է, որ Միջոցառման մեջ մանրամասնորեն անդրադարձ է կատարվել ըստ հաշվետու տարիների պահանջվող ֆինանսական ռեսուրսներին, նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրներին, սպասվող օգուտներին, ինչպես նաև արդյունքային չափորոշիչներին 2022 և 2023 թվականների համար:

ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից տեղում ուսումնասիրվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների առկա շենքային ենթակառուցվածքը, գնահատվել է Երևան քաղաքի տարածքում նոր քրեակատարողական հիմնարկի կառուցման հնարավորության հարցը և մշակվել համապատասխան լուծումներ:

«Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, շենքային պայմանների բավարարում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) հայտով նախատեսված է նաև՝



«Արդարադատության նախարարություն»

➤ ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի լուծարման և ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկի վարչական տարածքում ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի համար սահմանված լրակազմով՝ փակ, կիսափակ ռեժիմների և կալանավորվածների պահելու վայրի, այդ թվում՝ կալանք պատժատեսակի համար նախատեսված մասնաշենքի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

➤ ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկի փակման և դրա փոխարեն 350 լրակազմ ունեցող քրեակատարողական նոր հիմնարկի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

2) ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում (այսուհետ նաև՝ Հիմնարկ) մինչև 200 լրակազմ ունեցող կիսաբաց ուղղիչ հիմնարկի համար անհրաժեշտ պահման պայմաններ ստեղծելու նպատակով վերակառուցվել և հարդարվել են 48 խցեր՝ յուրաքանչյուրը 18 մետր քառակուսի բնակելի ընդհանուր մակերեսով, առանձնացված սանհանգույցով: Խցերը նախատեսված են առավելագույնը 4 անձի համար, ընդ որում՝ յուրաքանչյուր անձի համար ապահովվել է 4 մետր քառակուսուց ավելի տարածք, որի մեջ սանհանգույցը ներառված չէ: Հատուկ կիսաբաց ուղղիչ հիմնարկի պայմաններում պահվող անձանց համար կառուցվել և կահավորվել է առանձնացված ընդարձակ ճաշապատրաստման սենյակ և ճաշարահ, զբոսահրապարակ, թեքահարթակ, զրուցարան, տեղադրվել են նստարաններ, ինչպես նաև կատարվել է տարածքի կանաչապատում: Շինարարական աշխատանքների ավարտի արդյունքում Հիմնարկի 2-րդ տեղամասում 192 ազատազրկված անձանց համար ապահովվել են կիսաբաց ուղղիչ հիմնարկի պահման պատշաճ պայմաններ:

Բացի այդ, Հիմնարկի մասնաշենքերում ջեռուցման հետ համատեղված օդափոխության և օդորակման համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով 2020 թվականի ապրիլի 27-ին հայտարարվել էր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգ: Կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքում ջեռուցման հետ համատեղված օդափոխության և օդորակման համակարգի շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով 2020 թվականի նոյեմբերի 20-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման, հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերը բացվելու են հրավերը հրապարակվելուց հետո 40-րդ օրը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին, ժամը՝ 12:00-ին: Նշված աշխատանքների կատարման նախահաշվային արժեքը կազմում է 978.884.347 (ինը հարյուր յոթանասունույթ միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար երեք հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

3) ՀՀ արդարադատության նախարարության և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տեղում ուսումնասիրվել է ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացում, շենքային պայմանների բավարարում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) հայտով նախատեսված է նաև ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի բժշկական ստացիոնար մասնաշենքի կարողությունների զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 13 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել են քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և, ըստ քրեակատարողական հիմնարկների շենքային պայմանների հնարավորության, կատարվել է վերաբաշխում:

Ենթակետ 2. Քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումից, շենքային պայմանների բարելավումից հետո գնահատվել է քրեակատարողական հիմնարկներում առկա լրակազմերը և կատարվել համաչափ վերաբաշխում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2020 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովն ընդհանուր առմամբ տեղաբաշխել է 788 դատապարտյալի, ինչը նպատակ է հետապնդում ապահովել նաև քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համաչափ բաշխվածությունը:

Մասնավորապես՝ դատապարտյալները տեղաբաշխվել են հետևյալ բաշխվածությամբ.

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 53 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 65 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ՝ 1 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ 173 դատապարտյալ, որից 3-ը տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկվելու նպատակով.

ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ 22 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Հրազդան» քրեակատարողական հիմնարկ՝ 54 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկ՝ 73 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկ՝ 49 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ՝ 52 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ՝ 63 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ 164 դատապարտյալ.

ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկ՝ 19 դատապարտյալ:

Հատկանշական է, որ Ռազմավարությանը համահունչ՝ քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համաչափ բաշխվածությունն ամբողջովին հնարավոր կլինի ապահովել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացումից և դրանց կապիտալ վերանորոգումից հետո:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 15

Ենթակետ 1. Գնահատվել են քրեակատարողական ծառայողների սոցիալական՝ այդ թվում՝ բնակարանային ապահովման կարիքները:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

«ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի «Պայմանագրային զինծառայողին ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում վճարելու կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1321-Ն որոշման համաձայն՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունում 2020 թվականի օգոստոսի 20-ի դրությամբ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում է տրամադրվում 15 շահառուի:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի «Հանրային ծառայողներին բնակարանով ապահովման նպատակով Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 19/8 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրի բնակարանների և ավտոկայանատեղիների վաճառքի կարգը հաստատելու մասին» N 885-Ն որոշման շահառու դառնալուն հավակնող քրեակատարողական ծառայության 10 ծառայողների տվյալներ ուղարկվել են ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Միևնույն ժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ ֆինանսների նախարարություն կարծիքի է ներկայացվել «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու» պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու ու քրեակատարողական ծառայողների կողմից բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը միտված է քրեակատարողական ծառայողների բնակարանային խնդիրների լուծմանը:

Նախագծի վերաբերյալ ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության բացասական կարծիքն առ այն, որ բնակարանների կանխավճարի ֆինանսավորման, տոկոսադրույքների սուբսիդավորման և լրացուցիչ երաշխիքների համար ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 1212-Ն որոշմամբ գումարներ նախատեսված չեն, և առաջարկվում է զերծ մնալ ընթացիկ ծախսերի գծով նոր նախաձեռնություններից և լրացուցիչ ծախսերի ներառումից: Ներկայում իրականացվում են լրացուցիչ քննարկումներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 ԹՎԱԿԱՆ).

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 16

Ենթակետ 1. Իրականացվել է կադրերի ընտրության (պատրաստման) և տեղաբաշխման, ինչպես նաև կադրերի առաջխաղացման մեխանիզմների ամբողջական գնահատում և ներկայացվել է առաջարկություն այդպիսի մեխանիզմների վերանայման վերաբերյալ:

Ենթակետ 2. Վերանայվել են կադրերի ընտրության (պատրաստման) և տեղաբաշխման, ինչպես նաև կադրերի առաջխաղացման մեխանիզմները:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2020 թվականի հունվարի 21-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել և 2020 թվականի փետրվարի 22-ից ուժի մեջ է մտել մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների փաթեթը (այսուհետ՝ Փաթեթ): Փաթեթի շրջանակում, ի թիվս այլնի, փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք): Օրենքի շրջանակներում կարգավորվել են մի շարք հարաբերություններ, որոնք նպաստելու են Քրեակատարողական ծառայությունը որակյալ կադրերով համալրելուն և նրանց տեղաբաշխելուն, ինչպես նաև կադրերի առաջխաղացման մեխանիզմների ամբողջական գնահատման իրականացմանը: Բացի այդ, «Վարչապետի 2020 թվականի ապրիլի 29-ի թիվ 505-Ա որոշմամբ հաստատվել է մի շարք օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը: Նշված ցանկով, ի թիվս այլնի, նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 13-ի N 530-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների պաշտոններին համապատասխանող սկզբնական կոչումները սահմանելու մասին», «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների պաշտոններ զբաղեցնելու մրցույթի անցկացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումների, «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայողներին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանելու վերաբերյալ», «Քրեակատարողական և հարկադիր կատարման ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու վերաբերյալ» ՀՀ փոխվարչապետի որոշումների և այլ ակտերի ընդունումը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 2020 թվականի հուլիսի 30-ին ընդունվել է «Քրեակատարողական և հարկադիր կատարման ապահովող ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» ՀՀ փոխվարչապետի N 462-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), որը սահմանում է նշված ծառայություններ դիմած և ծառայությունում պաշտոնի անցնելու համար օրենքով սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիներին ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը: Որոշումն արդեն իսկ կիրառվում է, և քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթը հաղթահարած 4 անձի համար «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Որոշմամբ սահմանված կարգով առաջիկայում կազմակերպվել է համապատասխան դասընթացի անցկացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- o **ԿԱՏԱՐՎԱԾ Է**



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 17

Ենթակետ 1. «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է միջին մասնագիտական «Իրավագիտություն» և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության «քրեակատարողական գործ» մասնագիտության կազմակերպում:

Ենթակետ 2. Կազմակերպվում է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթություն:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2020 թվականի հուլիսի 30-ին ընդունվել է ՀՀ փոխվարչապետի «Քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ուսումնական դասընթացում ներգրավելու, դասընթաց անցնելու կարգը, պայմանները և դասընթացի ավարտից հետո պաշտոնի նշանակման կարգը սահմանելու մասին» N 462-Ն որոշումը: 2020 թվականի դեկտեմբերի 17-ին հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարի «Քրեակատարողական ծառայություն դիմած և այդ ծառայությունում պաշտոնի անցնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող, սակայն աշխատանքային փորձ չունեցող քաղաքացիների (ունկնդիրների) ուսումնական դասընթաց անցնելու 2020 թվականի ծրագիրը հաստատելու, ինչպես նաև ունկնդիրների խմբի կազմը, պրակտիկայի վայրերի և դրանց ղեկավարների ցանկը հաստատելու մասին» N 532-Ա հրամանը: Նշված ակտերի հիման վրա ունկնդիրները անցել են իրականացվող պատրաստման դասընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանման համար պետական բյուջեից հատկացումներ չեն եղել՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակի (ապա՝ կարանտին) և ռազմական դրության հաստատմամբ: Այսինքն՝ հնարավոր չի եղել ապահովել պետական ֆինանսավորմամբ «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանումը: Ինչ վերաբերում է վճարովի հիմունքներով «Իրավագիտություն» մասնագիտության ուսուցանմանը, նման ձևաչափով դիմորդներ չեն եղել: Առաջիկա տարվա ընթացքում կշարունակվեն քայլեր ձեռնարկվել պետական բյուջեից ֆինանսական և (կամ) ներդրումային հատկացումների ներգրավմամբ ոչ միայն աշխատանքային փորձ չունեցող, այլև քրեակատարողական բոլոր ծառայողների պատրաստման գործընթացը հնարավորինս օպտիմալ ձևաչափով կազմակերպելու ուղղությամբ: Նույն տրամաբանությամբ իրականացվելու է «Իրավագիտություն» մասնագիտության միջին մասնագիտական կրթությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 18

Ենթակետ 1. Փորձարկվել է e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը.

Ենթակետ 2. Փորձարկման արդյունքների հիման վրա կատարելագործվել և արդիականացվել է e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը.

Ենթակետ 3. Ձեռք են բերվել e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական գործարկման համար անհրաժեշտ տեխնիկական սարքավորումները.

Ենթակետ 4. E-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգը համակցվել է այլ գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ.

Ենթակետ 5. E-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի օգտագործման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման նպատակով քրեակատարողական ծառայողները վերապատրաստվել են.

Ենթակետ 6. E-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգն ամբողջությամբ գործարկվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն մշակելու, ստորաբաժանումների կողմից իրականացված աշխատանքների համապարփակ վերլուծությունն ապահովելու, ինչպես նաև հսկողության գործուն միջոցներ ներդնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մանրամասնորեն նախագծվել, մշակվել, ներդրվել, սակայն դեռևս ամբողջությամբ չի գործարկվել (շահագործվում է միայն թեստային եղանակը, այն հասանելի չէ քրեակատարողական հիմնարկների բոլոր ստորաբաժանումներին) «Կալանավորված անձանց և դատապարտյալների տեղեկատվական ռեգիստրը»՝ «E-penitentiary» էլեկտրոնային կառավարման համակարգը (այսուհետ՝ Համակարգ), որն աննախադեպ է իր մասշտաբով և տեխնիկական հնարավորություններով:

Համակարգը ներառում է կալանավորված անձանց և դատապարտյալների առնչությամբ օրենսդրությամբ իրականացվող բոլոր գործառնությունների (օրինակ՝ պատժի հետագա կրումից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի կրման ռեժիմների փոփոխման, տեսակցությունների, ուսման, աշխատանքի և այլնի) վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը: Ընդ որում, լուսանկարելու, մատնահետքեր վերցնելու, ինչպես նաև տեսանկարելու ողջ գործընթացն իրականացվելու է թվայնացված եղանակով՝ արխիվացվելով յուրաքանչյուր անձի անվանական թղթապանակում:

Ավտոմատացված համալիրի առավելություններից է նաև ցանկացած ձևաչափով հաշվետվություններ ստանալու, վերլուծական աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի՝ օրենսդրությամբ նախատեսված պարտականությունների ավտոմատ իրականացումը՝ բացառելով մարդկային գործոնի միջամտությունը:

«Արդարադատության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1401-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պահուստային ֆոնդից հատկացրել է Համակարգը ներդնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Ձեռք է բերվել անհրաժեշտ տեխնիկա, կահավորվել է սերվերային սենյակը, քրեակատարողական 12 հիմնարկների և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի միջև անցկացվել է L2 արտաքին ցանց (DATA), քրեակատարողական համակարգի աշխատակիցները վերապատրաստվել են:



ՀՀ արդարադատության նախարարություն

Հարկ է փաստել, որ Ռազմավարությամբ նախատեսված էր Համակարգն ամբողջությամբ գործարկել 2020 թվականի սեպտեմբերի առաջին տասնօրյակում, սակայն Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակի հիմքով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ տևական ժամանակ օբյեկտիվ պատճառներով անհնար էր Համակարգի օգտագործման համար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերման նպատակով իրականացնել քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացներ, բացի այդ Համակարգի գործարկման նպատակով անհրաժեշտ է նաև այն համակցել ՀՀ ոստիկանության շտեմարանների և ծրագրերի հետ, ինչը նախատեսված ժամանակացույցից շեղվել է, քանի որ համակցման կապող օղակ հանդիսացող «ԷԿԵՆԳ» ընկերությունը թարմացրել է իր ծրագրային ապահովումը, ուստի «E-penitentiary» ծրագրի համակցումը հնարավոր կլինի իրագործել ծրագրի սպասարկման ապահովում և թարմացում ծառայությունների ձեռքբերման պարագայում:

Ըստ այդմ, միայն տարեվերջին հնարավոր է եղել ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ (հստակեցվել են համակցումներ, արդիականացման տարրերը և այլն)՝ ապահովելու համար 2021 թվականի առաջին եռամսյակում համակարգի ամբողջական գործարկումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 19

Ենթակետ 1. Իրականացվել է ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքների առնչությամբ միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ենթակետ 2. Ուսումնասիրության հիման վրա մշակվել է ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը:

Ենթակետ 3. Պիլոտային ծրագրի շրջանակներում ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը փորձարկվել է առնվազն 4 քրեակատարողական հիմնարկում:

Ենթակետ 4. Փորձարկման արդյունքների հիման վրա ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը կատարելագործվել է:

Ենթակետ 5. Ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը հաստատվել է «Արդարադատության նախարարության հրամանով»:

Ենթակետ 6. Ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքի պատշաճ կիրառումն ապահովելու նպատակով քրեակատարողական հիմնարկների համապատասխան աշխատակիցները վերապատրաստվել են:

Ենթակետ 7. Ազատությունից զրկված անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքն ամբողջությամբ գործարկվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ազատությունից զրկված անչափահաս անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը մշակվել է, ապա ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքների կիրառման առնչությամբ միջազգային փորձին համահունչ, նախևառաջ փորձարկվել է «Արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող 10 անչափահասի հետ աշխատանքում, որի արդյունքում գործիքը ենթարկվել է լրամշակման: Զուգահեռաբար իրականացվել է նաև նշված հիմնարկի անձնակազմի 15 ներկայացուցչի համար երեք դասընթաց՝ ուղղված մասնագիտական բարեվարքությանը և գործիքի կիրառման հմտությունների ձևավորմանը: Գործիքի լրամշակված տարբերակը պիլոտային ծրագրի շրջանակներում կրկին փորձարկվելուց հետո կհաստատվի և ամբողջությամբ կկիրառվի «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում»:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ ազատությունից զրկված անչափահաս անձանց ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքի վերանայման շրջանակներում վեր են հանվել այն խնդիրները, որոնք պետք է հաշվի առնել չափահաս անձանց ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքը մշակելիս: Ըստ այդմ՝ կատարված ուսումնասիրությունների և շտկումների հիման վրա մշակվել է նաև ազատությունից զրկված չափահաս անձանց ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքի նախնական տարբերակը, որը կներդրվի պիլոտային ծրագրի շրջանակներում փորձարկելուց հետո կատարելագործվելու արդյունքում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 20

Ենթակետ 1. Ազատությունից զրկված անչափահաս անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է քրեակատարողական հիմնարկներում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ազատությունից զրկված անչափահաս անձանց ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը մշակվել է, ապա ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքների կիրառման առնչությամբ միջազգային փորձին համահունչ, նախևառաջ փորձարկվել է ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պահվող 10 անչափահասի հետ աշխատանքում, որի արդյունքում գործիքը ենթարկվել է լրամշակման: Զուգահեռաբար իրականացվել է նաև նշված հիմնարկի անձնակազմի 15 ներկայացուցչի համար երեք դասընթաց՝ ուղղված մասնագիտական բարեվարքությանը և գործիքի կիրառման հմտությունների ձևավորմանը: Գործիքի լրամշակված տարբերակը պիլոտային ծրագրի շրջանակներում կրկին փորձարկվելուց հետո կհաստատվի և ամբողջությամբ կկիրառվի ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 21

Ենթակետ 1. Ազատությունից զրկված անչափահասներն իրացնում են կրթություն ստանալու իրավունքը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Մինչև 2015 թվականը ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի տարածքում գործել է Աբովյանի թիվ 2 արհեստագործական ուսումնարանը՝ ունենալով երկու հիմնական ծրագիր՝ հանրակրթական և նախնական մասնագիտական: Անչափահասների թվի նվազումից և անչափահասների տեղամասը փակելուց հետո որոշում է կայացվել դադարեցնել հանրակրթության ծրագիրը՝ չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր տարի միջինում 5-15 երեխա է գտնվել նշված քրեակատարողական հիմնարկում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության ներքո գործող Աբովյանի թիվ 2 ուսումնարանի լուծարումից հետո, հաշվի առնելով հանրակրթության կազմակերպման կարևորությունը, ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գտնվող անչափահասների հիմնական կրթության ապահովման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը նախաձեռնել է ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթության իրականացման գործընթացը: Արդյունքում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կենտրոն) ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հանրակրթություն իրականացնելու համար ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 21-ի թիվ 250-Ա/2 և 251-Ա/2 հրամաններով ստացել է հանրակրթական ծրագրերով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզիաներ: ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 19-ի N 1398-Ա/2 հրամանով հաստատվել են նաև Կենտրոնի կողմից մշակված՝ ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց հանրակրթական հատուկ հաստատության ուսումնական պլանները (այլընտրանքային/հեղինակային/կրթական ծրագիր):

Կենտրոնի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 2-ից մեկնարկվել է ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված մինչ 19 տարեկան անձանց հանրակրթության կազմակերպման գործընթացը:

Կենտրոնի կողմից ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան», «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում իրականացված հանրակրթության շրջանակներում 2019-2020թթ. ուսումնական տարում ներգրավված է եղել **13 անձ**: 2020-2021թթ. ուսումնական տարում հանրակրթությունն իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան», «Սևան» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում՝ ապահովելով **11 անձի** կրթության իրավունքը:

Ներկայումս ազատությունից զրկված անչափահասներն իրացնում են կրթություն ստանալու իրենց իրավունքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- o **ԿԱՏԱՐՎԱԾ Է**



ՀՀ արդարադատության նախարարություն

- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 22

Ենթակետ 1. Իրականացվել է ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթության կարիքների գնահատում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից համատեղ մշակվել է ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթական կարիքի գնահատման մեթոդաբանությունն ու գործիքակազմը: Վերջինիս մեթոդաբանության համաձայն՝ ազատությունից զրկված անձանց մասնագիտական կրթական կարիքների գնահատումներն իրականացվելու են յուրաքանչյուր տարվա ավարտին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ վերոնշյալ գնահատումների վերաբերյալ հաշվետվություններ հնարավոր կլինի ներկայացնել միայն յուրաքանչյուր տարվա ավարտին:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 23 (շարունակական)

Ենթակետ 1. Ուսումնասիրել ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի արդյունավետությունը՝ վեր հանելով հիմնական խնդիրները:

Ենթակետ 2. Դիտարկվել են մասնավոր հատվածի հետ քրեակատարողական հիմնարկներում արտադրության կազմակերպման հնարավորությունները:

Ենթակետ 3. Քրեակատարողական հիմնարկներում ստեղծվել են ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովման կենտրոններ (արտադրամասեր, ջերմոցներ և այլն):

Ենթակետ 4. Սահմանվել են վերստուգելի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան գնահատել քրեակատարողական հիմնարկների կողմից ձեռնարկված՝ զբաղվածության ապահովմանն ուղղված քայլերը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

○ Ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի արդյունավետությունը գնահատելու նպատակով «Արդարադատության նախարարության կողմից իրականացվել է համապարփակ ուսումնասիրություն, որի շրջանակներում վեր են հանվել դատապարտյալների՝ տարբեր աշխատանքներում ներգրավվելու շարժառիթները, վերլուծվել են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից նախորդ տարիներին ծավալված գործունեության ընթացքում դատապարտյալների աշխատանքային զբաղվածության ապահովման հարցում բացթողումները, ինչպես նաև ներկայացվել են լուծումներ ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի արդյունավետության բարձրացման համատեքստում, ինչի կարևորությունն ավելի է ընդգծվում դատապարտյալների վերասոցիալականացման գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու և պատժողական քաղաքականությունից վերականգնողական արդարադատության անցման հիմնախնդրի լուծման պայմաններում: Վերլուծությունը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

○ Վերլուծության հիման վրա Հիմնադրամի կողմից մշակվել են դատապարտյալների և պրոբացիայի շահառուների զբաղվածության ապահովմանն ուղղված մի շարք ծրագրեր, որոնք, նոր կորոնավիրուսային վարակով պայմանավորված, հնարավոր չի եղել կյանքի կոչել 2020 թվականի ընթացքում: Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակի (ապա՝ կարանտին) և ռազմական դրության հաստատման պայմաններում ֆինանսական նախատեսվող հատկացումները չեն հաստատվել և չեն տրամադրվել: Նշված ժամանակահատվածում օբյեկտիվորեն հնարավոր չի եղել ապահովել նաև ներդրումային հատկացումներ: Այդուհանդերձ, անհրաժեշտ է արձանագրել, որ «Արդարադատության նախարարության, Հիմնադրամի և «Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության համատեղ ջանքերով 2020 թվականի ընթացքում հնարավորինս ապահովվել է դատապարտյալների օգտակար զբաղվածությունը: Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից շարունակվել է անհրաժեշտ գույքով և տեխնիկայով համալրման հայտերի բավարարման գործընթացը՝ հացի և կարի արտադրություններում, ինչպես նաև ստեղծագործական, գյուղատնտեսական, այգեգործական և տնտեսական այլ ոլորտի աշխատանքներում դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու նպատակով: Հիմնադրամի կողմից հնարավորինս բարեկարգվել են առկա արտադրամասերը, ինչը նպաստել է ավելի մեծ թվով դատապարտյալների զբաղվածության ապահովմանը:



«Արդարադատության նախարարություն»

- «Արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում առկա և չգործող 3 ջերմոցներից մեկում Հիմնադրամի նախաձեռնությամբ 2020 թվականի հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում կատարվել են վերականգնողական աշխատանքներ. իրականացվել են հողային աշխատանքներ, ներդրվել է կաթիլային համակարգ, փորձնական ցանվել է վարունգ: Հիմնադրամը դիմել է նշված քրեակատարողական հիմնարկի և «Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությանը՝ ցանկություն հայտնաձգատապարտյալներին և պրոբացիայի շահառուներին այդպիսի աշխատանքներում ներգրավելու համար: Հաշվետու ժամանակահատվածում Հիմնադրամի կողմից շարունակվել է անհրաժեշտ գույքով և տեխնիկայով համալրման հայտերի բավարարման գործընթացը՝ հացի և կարի արտադրություններում, ինչպես նաև ստեղծագործական, գյուղատնտեսական, այգեգործական և տնտեսական այլ ոլորտի աշխատանքներում դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու նպատակով: ՀՀ ԱՆ «Վանաձոր», «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներում շուրջ 25 դատապարտյալի մասնակցությամբ կազմակերպվել են հացաթխման և խոհարարական դասընթացներ: ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հացաթխման դասընթացներին մասնակցած 5 դատապարտյալներից 2-ը ընդգրկվել են հացի արտադրական աշխատանքներում: Կարի արտադրական աշխատանքներում մասնակցություն ունենալու ցանկություն են հայտնել ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող ևս 3 կին դատապարտյալ: ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների ստեղծագործական թիմը Հիմնադրամի կողմից ապահովվել է փայտամշակման նոր հաստոցով, որի արդյունքում 2020 թվականի ընթացքում ստեղծագործական աշխատանքներում ներգրավվել է շուրջ 45 դատապարտյալ: Կրակայրիչների արտադրական և հավաքման աշխատանքներում ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկից ներգրավվել է 9, իսկ ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկից՝ 1 դատապարտյալ: ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող 1 կին դատապարտյալ ներգրավվել է անասնապահական աշխատանքներում: Միաժամանակ, շարունակվում են բանակցությունները մասնավոր հատվածի այլ ներկայացուցիչների հետ՝ դատապարտյալների զբաղվածությունն ապահովելու, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում արտադրության կազմակերպման համատեքստում:
- Սահմանված ժամանակահատվածում մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ են ներկայացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձանց զբաղվածության ապահովման արդյունավետության գնահատման վերստուգելի չափանիշներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 24

Ենթակետ 1. Մշակվել են գեղագիտական և կրթական դասընթացների առարկայական ծրագրեր և գործողությունների իրականացման պլաններ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 25-Ա հրամանով սահմանվել են իրավախախտում կատարած անձանց 2020 թվականի գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրին մասնակցող ունկնդիրների թիվը, դասընթացի տևողությունը և ծրագրի ընդհանուր արժեքը:

Ռազմավարությանը համահունչ՝ «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրի շրջանակներն ընդլայնվել են: Հատկանշական է, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներից բացի, գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրի՝ 2020 թվականի փետրվար ամսից սկսած դասընթացներին ընդգրկվել են նաև ՀՀ ԱՆ «Վարդաշեն», իսկ արդեն հուլիսից՝ «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձինք:

Միաժամանակ հարկ է նշել, որ գեղագիտական դաստիարակության և կրթության ծրագրի շահառուներ են դարձել ոչ միայն ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատազրկված անձինք, այլև պրոբացիայի շահառուները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 25 (շարունակական)

Ենթակետ 1. Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ մշակվել են մասնագիտական կրթության ուսումնական և գործողությունների իրականացման պլաններ:

Ենթակետ 2. Մասնագիտական կրթական ծրագրերն իրականացվում են:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.1-ին մասի համաձայն՝ ազատագրկման ձևով պատիժ կրող այն անձինք, որոնց պատժի կրման ավարտին մնացել է մինչև վեց ամիս, և որոնք, որպես աշխատանք փնտրող անձ, հաշվառվել են «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի կողմից, իրավունք ունեն ընդգրկվելու ամենամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում: Դրա հիման վրա մասնագիտական ուսուցում կարող է կազմակերպվել աշխատաշուկայում պահանջարկ ունեցող այն մասնագիտությունների գծով, որոնք հնարավոր է ուսուցանել կարճաժամկետ դասընթացների (մինչև 5 ամիս տևողությամբ) միջոցով:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման հավելված N 11-ով սահմանված ընթացակարգի համաձայն՝ Զբաղվածության պետական գործակալության և ՀՀ արդարադատության նախարարության համագործակցության արդյունքում կազմակերպվել է մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացումը՝ հաշվապահ, փայտյա գեղարվեստական իրեր պատրաստող, ծեփագործ, ավտոփականագործ, համակարգչային օպերատոր, կոշկակար, խոհարար, դիմահարդար, տեխնիկ-մեխանիկ, խառատ և կահույքագործ մասնագիտությունների գծով 29 անձի ուսուցումն ապահովելու նպատակով: Ուսուցման ծառայությունների ձեռքբերման նպատակով ներկայացված հայտում ընդգրկված անձանցից 13-ը եղել են ՀՀ ԱՆ «Կոշ» քրեակատարողական հիմնարկից, 7-ը՝ ՀՀ ԱՆ «Հրազդան», 4-ը՝ ՀՀ ԱՆ «Աբովյան», 3-ը՝ ՀՀ ԱՆ «Արմավիր», 2-ը՝ ՀՀ ԱՆ «Գորիս» քրեակատարողական հիմնարկներից:

Զբաղվածության պետական գործակալության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով հայտարարված գնման գործընթացին ուսուցման ծառայություններ մատուցող որևէ կազմակերպություն չի մասնակցել, որի պատճառով նշված շահառուների մասնագիտական ուսուցումը չի իրականացվել: Ներկայումս շարունակվում են Զբաղվածության պետական գործակալության հետ համատեղ գործուն քայլեր ձեռնարկվել նշված մասնագիտական ուսուցման ծրագրերը վերագործարկելու, նոր մրցույթներ հայտարարելու ուղղությամբ՝ ուսուցման ծառայություններ մատուցող կազմակերպություններին նշված միջոցառումներին ընդգրկելու և պատժի կրման ավարտին մինչև վեց ամիս մնացած ազատագրկված անձանց մասնագիտական ուսուցման դասընթացները կազմակերպելու նպատակով: Անհրաժեշտության դեպքում կփոփոխվի նաև կարճաժամկետ դասընթացների բովանդակությունը, աշխատաշուկայում պահանջարկ ունեցող այն մասնագիտությունների ցանկը, որոնք հնարավոր է իրականացնել կարճաժամկետ դասընթացների միջոցով:

Միևնույն ժամանակ, հարկ է շեշտադրել այն հանգամանքը, որ չնայած վերոգրյալ՝ ազատագրկված անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված մասնագիտական ծրագրերի իրականացման ընթացիկ խնդիրների առկայությանը՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ընդլայնվել է ազատագրկված անձանց մասնագիտական կրթական ծրագրերի շահառուների շրջանակները՝ այդպիսով հնարավորինս ապահովելով



ՀՀ արդարադատության նախարարություն

ազատությունից զրկված անձանց ոչ ֆորմալ կրթության կազմակերպումը: Մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարի հրամանով 2020 թվականի փետրվար ամսից սկսած ՀՀ ԱՆ «Աբովյան», «Արմավիր» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում (նաև ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Երևանի բաժնում) իրականացվում է «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Արդեն 2020 թվականի հուլիս ամսից Ծրագրին միացել են նաև ՀՀ ԱՆ «Սևան» և «Կոչ» քրեակատարողական հիմնարկները: Ծրագրին արդեն մասնակցում է շուրջ 110 ազատությունից զրկված անձ: Բացի այդ, Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ, որոնց միջոցով ազատությունից զրկված անձինք կստանան մասնագիտական որակավորում (օրինակ՝ զոդում, սալիկապատում, խոհարարություն): Նշված դասընթացները կիրականացվեն՝ ըստ բյուջետային հատկացումների, իսկ օրենքով չարգելված միջոցների առկայության դեպքում՝ նաև դրանց միջոցով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 26

Ենթակետ 1. Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ մշակվել են մասնագիտական կրթության ուսումնական և գործողությունների իրականացման պլաններ (ուսումնական պլան-ժամանակացույց՝ ըստ յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկի):

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Ազատությունից զրկված անձանց համար առցանց-հեռավար կրթական հարթակի ստեղծման նախադրյալներն ապահովելու նպատակով 2020 թվականին ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից գեղագիտական դաստիարակությանը և կրթությանն ուղղված դասընթացներն իրականացվել են հեռավար եղանակով, ինչը հնարավորություն է տվել գնահատելու դատապարտյալների վերասոցիալականացման շրջանակներում կազմակերպվող դասընթացները հեռավար եղանակով ուսուցանելու գործընթացի արդյունավետությունը:

Հարկ է նշել, որ 2020 թվականի բյուջետային հատկացումների բացակայությամբ պայմանավորված՝ հնարավոր չի եղել ապահովել ազատությունից զրկված անձանց առցանց-հեռավար կրթական հարթակի մշակման աշխատանքների իրականացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից նշված դասընթացները հեռավար եղանակով դասավանդելու փորձառությունը՝ հաջորդ տարվա բյուջետային հատկացումների սահմաններում կձեռնարկվեն անհրաժեշտ քայլեր ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական հարթակի գաղափարը կյանքի կոչելու համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 27

Ենթակետ 1. Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ մշակվել են համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին նախագծեր և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել են «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագծեր): Նախագծերը ներկայացվել են Վարչապետի աշխատակազմ և զուգահեռաբար դրվել ներքին շրջանառության մեջ: Ներկայումս ընթանում են Նախագծերի վերջնական լրամշակման աշխատանքները, որից հետո Նախագծերը պաշտոնապես կդրվեն շրջանառության մեջ և կներկայացվեն հանրային քննարկման:

Շահագրգիռ բոլոր մարմիններից կարծիքներն ստանալուց և ամփոփելուց հետո Նախագծերը սահմանված կարգով կրկին կներկայացվեն Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 29

Ենթակետ 1. Միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա մշակվել է ընտանիքում բռնության գործադրման համար դատապարտված անձանց հետ վերականգնողական աշխատանքների իրականացման մեթոդաբանությունը և ծրագիրը, որն իրականացվում է դատապարտյալների և պրոբացիայի շահառուների հետ ինչպես պատժի (վերահսկողության) կրման (իրականացման) ընթացքում, այնպես էլ պատիժը (վերահսկողությունը) կրելուց (ավարտվելուց) հետո:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է «Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում» դասընթացի մոդուլը, ձևավորվել են խմբեր ընտանիքում բռնության գործադրման համար դատապարտված անձանցից՝ հաշվի առնելով խմբում մասնակիցների համատեղելիությունը:

Հատկանշական է, որ 2020 թվականի օգոստոս ամսից ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում «Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում» դասընթացն իրականացվում է շուրջ 20 դատապարտյալի շրջանում (2 խումբ, յուրաքանչյուրը՝ 40 ակադեմիական ժամ):

Հաշվի առնելով արդեն իսկ իրականացված դասընթացի մոդուլի կատարման փորձառությունը՝ այն կլրամշակվի և հաջորդ տարի կիրականացվի պրոբացիայի շահառուների շրջանում:

Ինչ վերաբերում է ընտանիքում բռնության գործադրման համար դատապարտված անձանց հետ պատիժը (վերահսկողությունը) կրելուց (ավարտվելուց) հետո վերականգնողական աշխատանքների իրականացմանը, ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված՝ այն 2020 թվականի ընթացքում հնարավոր չէ իրականացնել: Նշված անձանց հետ այդպիսի աշխատանքների իրականացումը կդիտարկվի հաջորդ տարվա համար նախատեսված ֆինանսական հատկացումների շրջանակում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 30

Ենթակետ 1. Գնահատվել է «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գործունեության արդյունավետությունը:

Ենթակետ 2. Ներկայացվել է առաջարկություն «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) գործունեության գնահատման վերաբերյալ համապարփակ վերլուծություն: Վերլուծությամբ արդեն իսկ ներկայացվել են մի շարք առաջարկներ՝ ուղղված Հիմնադրամի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ դրանով իսկ ապահովելով Հիմնադրամի գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրային և կադրային բաղադրիչների վերաբերյալ առաջարկների ներկայացումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 31 (շարունակական)

Ենթակետ 1. Քրեակատարողական հիմնարկներում ապահովվել են հաշմանդամություն ունեցող ազատությունից զրկված անձանց համար մատչելի պայմաններ (թեքահարթակներ, բազրիքներ, համապատասխան սանհանգույցներ և այլն) և համապատասխան հարմարանքներ (տեսողության, լսողության և խոսքի խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար վերականգնման տեխնիկական միջոցներ և այլ օժանդակ պարագաներ):

Ենթակետ 2. Ապահովվել է հաշմանդամություն ունեցող դատապարտյալների համար առողջապահական ծառայությունների հասանելիությունը, մասնագիտական խնամքը:

Ենթակետ 3. Քրեակատարողական ծառայողները հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու համար վերապատրաստվել են:

Ենթակետ 4. Քրեակատարողական հիմնարկներն ապահովված են Բրայլյան տառատեսակի գրքերով, ձայնային գրքերով, սուրդոթարգմանության տեսանյութերով և այլ տեղեկատվական նյութերով:

Ենթակետ 5. Նախատեսված են հաշմանդամություն ունեցող անձնաց համար տեղեկատվության ստացման և հաղորդման հնարավորությունն ապահովող տեխնիկական և աշխատակարգային լուծումներ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

o Ռազմավարական նշված կետի կատարումն ապահովելու նպատակով ՀՀ 2021-2023 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման շրջանակներում (հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի հուլիսի 10-ի N 1212-Ն որոշմամբ) ՀՀ արդարադատության նախարարության կողմից, ի թիվս այլնի, ներկայացվել է «Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց պահման մատչելի պայմանների ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) հայտը, որով նախատեսված է ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող անձանց համար պատշաճ պայմանների ապահովման նպատակով քրեակատարողական հիմնարկներն ապահովել թեքահարթակներով, բազրիքներով և համապատասխան սանհանգույցներով, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար ձեռք բերել սայլակներ, լսողական սարքեր, ականջակալներ, աուդիոգիրք լսելու սարքեր, Բրայլյան տառատեսակի գրքեր:

o ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց», «Արմավիր» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկներում հատուկ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կառուցվել են մի շարք թեքահարթակներ, բացի այդ, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում ստեղծվել են հատուկ հարմարեցված պայմաններ՝ լրգասենյակից և սանհանգույցից օգտվելու համար:

o Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական խնամքը ապահովվել է համապատասխան քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների աշխատակիցների միջոցով: Որոշ՝ ծայրահեղ դեպքերում խնամքն իրականացվել է նաև ազատությունից զրկված այլ անձանց՝ խցակիցների կողմից: վերջիններիս հետ քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի աշխատակիցների կողմից պարբերաբար անցկացվել են համապատասխան խորհրդատվություններ:



ՀՀ արդարադատության նախարարություն

- Քրեակատարողական ծառայողների 2020 թվականի վերապատրաստումների ծրագրերում նախատեսվել է «Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները» վերտառությամբ դասընթացը:
- 2020 թվականի ընթացքում «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի 10 աշխատակիցներ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում անցել են պալիատիվ օգնության թեմայով վերապատրաստումներ: 2019 թվականի նոյեմբերից մեկնարկած՝ Եվրոպայի խորհրդի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում իրականացվել է քրեակատարողական հիմնարկում աշխատող բուժանձնակազմի վերապատրաստումների թեմատիկ գնահատում: Իրականացված գնահատման արդյունքների հիման վրա Ծրագրի շրջանակներում նախատեսվել է վերապատրաստել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ավագ և միջին բուժանձնակազմին: Վերապատրաստումները նախատեսված է անցկացնել 2021-2022 թվականների ընթացքում:
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայլյան տառատեսակի գրքերը, ձայնային գրքերը, սուրդոթարգմանության տեսանյութերը, ինչպես նաև դրանքիսելու համար նախատեսված սարքեր և այլ տեղեկատվական նյութերը հասանելի դարձնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանի ղեկավարության և մասնագիտացված այլ կառույցների հետ իրականացված բանավոր քննարկումների արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն՝ ըստ անհրաժեշտության նման գրականություն և տեղեկատվական նյութեր փոխանցելու պատրաստակամության վերաբերյալ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 32 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել են ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված առկա օրենսդրական կարգավորումները և, ըստ անհրաժեշտության, մշակվել է իրավական ակտի նախագիծ:

Ենթակետ 2. Գործնականում ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու, իրավունքահեն մոտեցում (right-based approach) դրսևորելու նպատակով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը վերապատրաստվել է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված կետի կատարումը ունի շարունակական բնույթ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից ձեռնարկվել են քայլեր՝ ռազմավարական նշված կետը 2020 թվականի մասով կատարելու, ինչպես նաև հաջորդ տարիների կատարողականի համար նախապատրաստական աշխատանքներն ապահովելու նպատակով: Մասնավորապես՝ վերանայվել է քրեակատարողական ծառայողների վերապատրաստման դասընթացների ծրագիրը: Ըստ այդմ՝ հիմքում ունենալով նաև ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների իրացումն ապահովելու, իրավունքահեն մոտեցում (right-based approach) դրսևորելու կարևորությունը՝ ներկայումս ծրագրի շրջանակներում ուսուցանվում են այնպիսի դասընթացներ, ինչպիսիք են «Քրեակատարողական համակարգում իրավախախտ անչափահասների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները», «Քրեակատարողական համակարգում խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում պահվող հաշմանդամություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում պահվող 65 տարին լրացած դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները», «Քրեակատարողական հիմնարկներում պահվող կին դատապարտյալների և կալանավորված անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունները»:

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրեակատարողական ծառայողների վերապատրաստումների՝ ինքնավնասումների և ինքնասպանությունների դեպքերի կանխարգելման, ինչպես նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի արձանագրմանն առնչությամբ: Այս համատեքստում հարկ է նշել նաև, որ նշված ծրագրի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվել է ինքնավնասման և ինքնասպանության հակում ունեցող անձանց կարիքների, առկա օրենսդրական կարգավորումների գնահատում և վերլուծություն, մշակվել և ընդունվել է ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 513-Լ հրամանը: Նշված հրամանի շրջանակներում թիրախավորվել են ոլորտային հիմնական խնդիրները, և ներկայացվել են դրանց լուծմանն ուղղված միջոցառումները:



ՀՀ արդարադատության նախարարություն

Միաժամանակ հարկ է նշել, որ ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից անհրաժեշտ է մի շարք համակարգային օրենսդրական փոփոխությունների իրականացում, որպիսի գործընթացն արդեն իսկ մեկնարկել է: Մասնավորապես՝ մշակվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի N 1543-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի փաթեթը, որի ընդունմամբ հնարավոր կլինի ապահովել ազատությունից զրկված և հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքների երաշխավորումը: Նախագծերի փաթեթով, ի թիվս այլնի, նախատեսվում է բացառել անչափահասին պատժախուց տեղափոխելու հնարավորությունը, սահմանափակել ինքնասպանության և (կամ) ինքնավնասման ռիսկային խմբին դասվող ազատությունից զրկված անձանց՝ պարանի, կոշկաքուղերի, սավանի կամ ցանկացած այլ առարկայի կամ միջոցի հասանելիությունը, որը կարող է վնաս պատճառել անձի կյանքին կամ առողջությանը, հստակեցնել մենախուց տեղափոխելու իրավական կառուցակարգերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 33 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել է ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի ապահովման առկա համակարգը և ներկայացվել է առաջարկություն դրա արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Ենթակետ 2. Ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի պատշաճ իրացման նպատակով ուսումնասիրվել են քրեակատարողական հիմնարկներ տրանսպորտային հասանելիության խնդիրները, ապահովվել է տրանսպորտային հաղորդակցությունը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներից ստացված տեղեկատվության հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվել է ուսումնասիրություն ՀՀ ԱՆ քրեակատարողական բոլոր հիմնարկների տրանսպորտային հասանելիության վերաբերյալ:

Ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է հետևյալը.

ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց», «Երևան-Կենտրոն», «Հրազդան», «Վանաձոր», «Կոջ», «Գորիս» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում հանրային տրանսպորտի հասանելիության խնդիր որպես այդպիսին առկա չէ, մասնավորապես՝ հանրային տրանսպորտի կանգառների (այդ թվում՝ նաև միջմարզային, ներքաղաքային և ներհամայնքային) հեռավորությունը վերոնշյալ քրեակատարողական հիմնարկների տեղակայման վայրից չի գերազանցում 250 մետրը, իսկ ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի տեղակայման վայրից ամենահեռու կանգառը՝ Երևան-Աբովյան միջքաղաքային 261 համարի ավտոբուսի կանգառը, գտնվում է շուրջ 400 մետր հեռավորության վրա, իսկ Աբովյան-Գեղաշեն միջհամայնքային տրանսպորտի կանգառը՝ շուրջ 50 մետր հեռավորության վրա: Հանրային տրանսպորտի հասանելիության խնդրի լուծման առաջնահերթություն առկա է միայն ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում: Մասնավորապես՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկները, տեղակայված լինելով Երևան քաղաքում, այնուամենայնիվ հանրային տրանսպորտի ամենամոտ կանգառից գտնվում են շուրջ 1կմ հեռավորության վրա, իսկ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկից մինչև մոտակա կանգառի հեռավորությունը կազմում է շուրջ 3,5կմ: Ինչ վերաբերում է ՀՀ ԱՆ «Սևան» քրեակատարողական հիմնարկին, հարկ է նշել, որ այն տեղակայված է Երևան-Սևան մայրուղուց շուրջ 500 մետր հեռավորության վրա, սակայն տվյալ հատվածում որևէ հանրային տրանսպորտի համար նախատեսված կանգառ առկա չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ կապի իրավունքի անարգել իրացման անհրաժեշտությունը՝ ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ խնդրո առարկա հարցի լուծմանն աջակցելու նպատակով: Հատկանշական է, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն», «Արմավիր» և «Սևան» քրեակատարողական հիմնարկների հանրային տրանսպորտի հասանելիության հարցը քննարկվում է Երևանի քաղաքապետի, Սևան և Արմավիր համայնքների ղեկավարների հետ՝ ներհամայնքային երթուղային ցանցի շրջանակներում քրեակատարողական հիմնարկների տրանսպորտային սպասարկումն իրականացնելու համար: Հարցի վերաբերյալ համայնքների ղեկավարների վերջնական դիրքորոշումը ստանալուց հետո, ներհամայնքային երթուղային ցանցի շրջանակներում հարցի կարգավորման անհնարինության դեպքում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների



Նախարարությունը կքննարկի ներմարզային կամ միջմարզային երթուղային ցանցերի շրջանակներում վերը նշված քրեակատարողական հիմնարկների տրանսպորտային սպասարկումը կազմակերպելու հարցը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 34 (շարունակական)

Ենթակետ 1. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի գործարկման համար անհրաժեշտ իրավական ակտերի նախագծերն ընդունվել են:

Ենթակետ 2. Ստեղծվել են քրեակատարողական բժշկական ծառայության սոցիալական ապահովության անհրաժեշտ երաշխիքներ:

Ենթակետ 3. Անհրաժեշտ և բավարար պայմաններ են ստեղծվել որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման համար (շենքային պայմանների բարելավում, որակյալ կադրերի և սարքավորումների ապահովում):

Ենթակետ 4. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը գործունեություն է ծավալում:

Ենթակետ 5. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմը պարբերաբար վերապատրաստվում է:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) Վերանայվել է ՔԿՀ-ներում բժշկական օգնության և սպասարկման հարաբերությունները կանոնակարգով մայր փաստաթուղթը՝ «Հ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի N 825-Ն որոշման նախագիծը: Նախագիծը դարձել է բազմակողմանի քննարկման առարկա և ՀՀ կառավարության կողմից 2019 թվականի օգոստոսի 15-ին ընդունվել:

2) ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է և 2020 թվականի մարտի 12-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության N 294-Ն որոշումը, ինչի արդյունքում «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև ՊՈԱԿ) աշխատակիցների սոցիալական երաշխիքները վերականգնելու, աշխատանքային արդյունավետությունը և գրավչությունը բարձրացնելու, ինչպես նաև կադրերի արտահոսքը կանխելու նպատակով վերջիններս ընդգրկվել են սոցիալական փաթեթի շահառուների ցանկում:

3) ՊՈԱԿ-ն իր փաստացի գործունեությունը սկսել է 2019թ. սեպտեմբեր ամսից: Ներկայումս ՊՈԱԿ-ի հաստիքացուցակը բաղկացած է 171 հաստիքից, որից համալրված են 165.25-ը: Կադրային բարեփոխումների արդյունքում հաշվետու տարվա ընթացքում շուրջ 50%-ով փոփոխվել է ՊՈԱԿ-ի բժշկական անձնակազմը՝ համալրվելով որակյալ և մոտիվացված կադրերով: Բոլոր քրեակատարողական հիմնարկներում բժշկական օգնությունը հասանելի է 24/7 ռեժիմով: ՊՈԱԿ-ի բոլոր ստորաբաժանումները հագեցած են առնվազն մեկ ընդհանուր պրակտիկայի բժիշկներով, բոլոր ստորաբաժանումներում կա ատամնաբույժ: ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն համալրվել է երկու օքսիգենատորով (թթվածնի կոնցենտրատոր), որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է միաժամանակ երկու հիվանդի համար: 2019 թվականի նոյեմբերի 1-ին մեկնարկել է ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագիրը, որի շրջանակներում, ի թիվս այլնի, 2020 թվականի ընթացքում իրականացվել է կարիքների գնահատում: Կարիքների գնահատման հիման վրա ցուցակագրվել են այն սարքավորումները, որոնցով անհրաժեշտ է համալրել ՊՈԱԿ-ի՝ քրեակատարողական հիմնարկներում տեղակայված ստորաբաժանումները: Սարքավորումների գնման արդյունքում հնարավոր կլինի շահագործման հանձնել «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի լաբորատորիան, ինչն էականորեն կբարձրացնի տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման որակը:



ՀՀ արդարադատության նախարարություն

2020 թվականի հունիսի 30-ին գործընկեր կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում ՀՀ ԱՆ քրեակատարողական համակարգին են նվիրաբերվել թվով 16 դյուրակիր համակարգիչներ՝ քրեակատարողական համակարգում բժշկական ծառայություններ մատուցող անձնակազմի վերապատրաստումն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

4) ՀՀ արդարադատության նախարարության, «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ առողջապահության նախարարության սերտ համագործակցության արդյունքում էապես փոխվել է ազատազրկված անձանց մասնագիտական բժշկական օգնություն ցուցաբերելու որակը: ՊՈԱԿ-ի աշխատակիցները, համաձայն նախապես մշակված ժամանակացույցի, անցնում են անհրաժեշտ վերապատրաստումներ հանրապետության լավագույն ուսումնական բազաներում: Նշված համագործակցության արդյունքում բարելավվել է բժշկական ծառայությունների մատուցման որակը, էականորեն կրճատվել է բժշկական օգնության մատուցման ժամանակահատվածը, այդ թվում՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական սպասարկման ուղեգրերով: Նախկին ժամանակներում այն կատարվում էր 1-2 ամսում, իսկ ներկայումս այդ ժամանակահատվածը կրճատվել է և կազմակերպվում է 1 օրում:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ հաշվետու տարվա ընթացքում ՊՈԱԿ-ի կողմից ապահովվել է ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնությունն ու սպասարկումը: ՊՈԱԿ-ի անձնակազմի կողմից տրամադրված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների բարձր որակն առավել ցայտուն է արտահայտում այն փաստը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2020 թվականի ընթացքում գրանցվել է մահացության ընդամենը 5 դեպք: Համեմատության համար կարելի է նշել, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գրանցվել է մահացության 21 դեպք, 2018 թվականի ընթացքում՝ 18 դեպք, 2017 թվականի ընթացքում՝ 17 դեպք, իսկ 2016 թվականի ընթացքում արձանագրվել է մահացության 29 դեպք:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 35

Ենթակետ 1. Մշակվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովի, դրան կից աշխատանքային խմբի գործունեության կարգի և վարձատրության չափորոշիչների սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծ:

Ենթակետ 2. Նախագծի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ:

Ենթակետ 3. Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովի, դրան կից աշխատանքային խմբերի գործունեության կարգը և վարձատրության չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը շրջանառվել է և դարձել միջմասնագիտական խմբերի քննարկման առարկա: Նախագիծը սահմանված ժամկետում ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 36

Ենթակետ 1. Մշակվել և հաստատվել է քրեակատարողական հիմնարկներում խոշտանգման և վատ վերաբերմունքի հետ կապված բժշկական հետազոտությունների արձանագրության ձևը և դրա լրացման ուղեցույցը:

Ենթակետ 2. Ուսումնասիրվել են վատ վերաբերմունքի փաստի հաստատման առնչությամբ առկա ընթացակարգերը, վատ վերաբերմունքի փաստի հաստատման հիման վրա ոչ նյութական վնասի հատուցման մեխանիզմները, անհրաժեշտության դեպքում մշակվել է իրավական ակտի նախագիծ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) «Արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2020 թվականի հունվարի 14-ին ընդունվել է «Կալանավորված անձի կամ դատապարտյալի ամբուլատոր բժշկական քարտի, հիվանդության պատմագրի, հիվանդության պատմագրի (բժշկական քարտի) քաղվածքի, խոշտանգման և վատ վերաբերմունքի այլ ձևերի հետ կապված բժշկական հետազոտությունների իրականացման և դեպքերի արձանագրման ձևերը և դրանց լրացման ուղեցույցները հաստատելու մասին» «Արդարադատության նախարարի հրամանի նախագիծը, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին: Արձանագրության ձևը, Ստամբուլյան արձանագրությանը համահունչ, պարունակում է «անատոմիական գծագրեր»:

2) Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել են վատ վերաբերմունքի փաստի հաստատման առնչությամբ առկա ընթացակարգերը, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա իրականացվել է վերլուծություն, որն ուղարկվել է Վարչապետի աշխատակազմի մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակ:

Զուգահեռաբար հարկ է փաստել, որ «Արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Փաթեթ), որով կարգավորվում են պատիժները կատարող հիմնարկի վարչակազմի գործողության, անգործության և ընդունված որոշման դեմ բերված բողոքների քննության հետ կապված հարցերը: Իրականացված վերլուծության հիման վրա Փաթեթի շրջանակներում նախատեսվելու են կառուցակարգեր՝ ուղղված վատ վերաբերմունքի փաստի հաստատմանը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 37

Ենթակետ 1. Սահմանվել են ազատությունից զրկված անձանց իրենց կամ մերձավոր ազգականների հաշվին ձեռք բերված դեղերը քրեակատարողական հիմնարկներ ընդունելու հստակ մեխանիզմներ՝ առաջնորդվելով բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

«Արդարադատության նախարարության կողմից մշակվել և «Կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ պահելը, հանձնույթներով, ծանրոցներով և փաթեթներով ստանալը և ձեռք բերելն արգելված իրերի ցանկում ներառվել է ցանկացած տեսակի դեղը, եթե առկա չէ բժշկի ցուցումը: Նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման դրույթները համապատասխանեցվել են միջազգային պահանջներին, ապահովվել է դատապարտյալների և կալանավորված անձանց կողմից դեղերի ստացման ու պահման նկատմամբ վերահսկողության հնարավորությունը՝ առաջնորդվելով բժշկական համապատասխան ցուցմամբ և չվնասելու սկզբունքով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 38

Ենթակետ 1. Ներկայացվել է առաջարկություն դեղերի ձեռք բերման այլընտրանքային ճկուն մեխանիզմի ներդրման վերաբերյալ, որը կապահովի առանց ժամանակի կորստի ազատությունից զրկված անձանց ըստ անհրաժեշտության դրանց տրամադրումը:

Ենթակետ 2. Մշակվել և ներդրվել է դեղերի ձեռք բերման այլընտրանքային ճկուն մեխանիզմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

«Արդարադատության նախարարության կողմից ուսումնասիրվել է ազատությունից զրկված անձանց համար դեղերի ձեռքբերման մեխանիզմը, ըստ այդմ՝ առանց ժամանակի կորստի դեղերի ձեռքբերումն ապահովելու նպատակով ներկայացվել է համապատասխան առաջարկություն՝ ՊՈԱԿ-ին հնարավորություն տալ անհետաձգելի դեպքերում շրջանցել օրենքով սահմանված ընթացակարգերը: Արդարադատության նախարարությունը վերլուծության է ենթարկել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ սույն կետում նաև՝ ՊՈԱԿ) կողմից ազատությունից զրկված անձանց համար դեղերի ձեռքբերման համակարգը: Վերլուծության արդյունքները հանգում են հետևյալին. «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը սկսել է գործունեություն ծավալել 2019 թվականի սեպտեմբեր ամսից: Գործունեության մեկնարկից հետո ՊՈԱԿ-ը գնահատել է նախորդ տարիներին Քրեակատարողական ծառայության կողմից ձեռքբերված դեղերի անվանացանկերը, մոնիթորինգի է ենթարկել դեղերի հատկացման վերաբերյալ ազատությունից զրկված անձանց դիմումները, ինչպես նաև վերազնահատել յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում տեղակայված՝ ՊՈԱԿ-ի բժշկական ստորաբաժանումների կարիքները: Արդյունքում՝ ՊՈԱԿ-ը ձևավորել է դեղերի փոփոխված անվանացանկը, որն առավել թիրախավորված կերպով ընդգրկում է այն դեղերը, որոնք անհրաժեշտ են քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացնելու հարցում: Հատկանշական է, որ դեղերի անվանացանկն ըստ պահանջարկի ձևավորելու նպատակով ՊՈԱԿ-ը եռամսյակը մեկ հարցումներ է իրականացնում յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում տեղակայված՝ ՊՈԱԿ-ի բժշկական ստորաբաժանումների շրջանում: Ստացված կարծիքների հիման վրա ՊՈԱԿ-ը վերանայում է դեղերի անվանացանկը՝ այդպիսով ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ տվյալ պահին անհրաժեշտ դեղերի ձեռքբերման համար: ՊՈԱԿ-ի կողմից իրականացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված մեխանիզմի կիրառման արդյունքում հնարավոր է դարձել ազատությունից զրկված անձանց համար անհրաժեշտ դեղերը ձեռք բերել առանց ձգձգումների: Բնականաբար, չեն բացառվում այնպիսի դեպքերը, երբ ազատությունից զրկված անձանց համար անհրաժեշտ դեղերը պետք է ստացվեն հրատապ կարգով, որպիսի պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն կանխատեսել: Նման դեպքերում ՊՈԱԿ-ի կողմից կարող է կիրառվել «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հրատապ ռեժիմով դեղերի ձեռքբերման մեխանիզմը (այն է՝ «Գնումը կարող է կատարվել մեկ անձից, եթե՝ (...) արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր օբյեկտիվորեն»



ՀՀ արդարադատության նախարարություն

կանխատեսել. (...))՝ այդպիսով բացառելով կյանքին կամ առողջությանը սպառնացող հնարավոր վտանգի առաջացումը և երաշխավորելով պացիենտի առողջության պահպանման իրավունքը:

Զուգահեռաբար հարկ է նկատի ունենալ այն, որ առողջապահական համակարգում բժշկական հաստատությունները, որպես կանոն, առաջնորդվում են նույն մեխանիզմով: Ըստ այդմ՝ այդ մեխանիզմի օգտագործման համատեքստում ՀՀ արդարադատության նախարարությունը շարունակելու է մոնիթորինգի ենթարկել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դեղերի ձեռքբերման համակարգը: Մոնիթորինգի արդյունքներով կրկին կքննարկվի գործարկվող կառուցակարգի արդյունավետության հարցը, իսկ անհրաժեշտության դեպքում կներկայացվի նոր առաջարկություն (որպես օրինակ կարող է լինել ՊՈԱԿ-ի բյուջեում որոշակի չափով ֆոնդի առանձնացումը, որը կարող է ծախսվել բացառապես հրատապ դեպքերում՝ համապատասխան հաշիվ-ապրանքագրերի տրամադրման եղանակով):

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 39

Ենթակետ 1. Ներկայացվել է առաջարկություն որոշ՝ ավելի հաճախ ախտորոշվող հիվանդությունների դեպքում ազատությունից զրկված անձանց դիետիկ սննդով ապահովելու վերաբերյալ:

Ենթակետ 2. Որոշ՝ ավելի հաճախ ախտորոշվող հիվանդությունների դեպքում ազատությունից զրկված անձինք ապահովվում են դիետիկ սննդով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2020 թվականի հունիսի 1-ից սկսված ՀՀ ԱՆ բոլոր քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց սննդի տրամադրման գործընթացն իրականացվում է մասնավոր ընկերության կողմից: Պատրաստի սննդից օգտված շահառուների թվաքանակը կազմել է 100%, որն ինքնին հանգեցրել է փոխանցվող հանձնույթների թվի նվազմանը, ինչի արդյունքում թեթևացել է նաև անազատության մեջ պահվող անձանց հարազատների հոգսը:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի ապահովման գործառույթը մասնավոր կազմակերպություններին պատվիրակելու հաշվին հնարավոր է դարձել էականորեն բարձրացնել պետության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին, ինչպես նաև կատարել ևս մեկ քայլ ազատությունից զրկված անձանց շրջանում խտրականությունը բացառելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, ազատությունից զրկված անձանց շրջանում վերջին տարիների ընթացքում առավել տարածված սիրտ-անոթային, աղեստամոքսային տրակտի, շաքարային դիաբետի, խրոնիկական հեպատիտների, լյարդի ցիռոզի հիվանդությունների բուժման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակված միջինացված դիետիկ սննդակարգերը ներառվել են ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում: Հարկ է նշել, որ դիետիկ սննդակարգերն ազատությունից զրկված անձանց ճաշացանկերում ընդգրկելու արդյունքում ներկայումս 66 անձ օգտվում է այդպիսի սննդակարգերից:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 40 (շարունակական)

Ենթակետ 1. Գնահատվել են քրեակատարողական հիմնարկներում մահվան, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի հիմքում ընկած հանգամանքները:

Ենթակետ 2. Մշակվել և իրականացվում է քրեակատարողական հիմնարկներում մահվան, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի կանխարգելման համալիր ծրագիր:

Ենթակետ 3. Նախատեսվել է ինքնավնասման, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող ազատությունից զրկված անձանց կյանքից զրկելու միջոցներին անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու օրենսդրական հնարավորություն (օրինակ՝ պարան, կոշկաքուղեր, սավան, գոտի և այլն):

Ենթակետ 4. Իրականացվում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի՝ ինքնավնասման վտանգի նախանշանների և այդ կապակցությամբ ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ ուսուցում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Իրականացվել է «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մահվան, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի և դրանց հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ վերլուծություն: Այս առումով հարկ է նշել, որ Եվրոպայի խորհրդի և «Արդարադատության նախարարության կողմից համատեղ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում որպես քրեակատարողական հիմնարկներում մահվան, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի կանխարգելման համալիր ծրագիր մշակվել և «Արդարադատության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 513-Լ հրամանով հաստատվել է Քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը, որով թիրախավորվել են ոլորտի առավել կարևոր խնդիրները, սահմանվել են հստակ միջոցառումներ (այդ թվում՝ հոգեկան առողջական վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման թեմաներով ծրագրերի մշակում և վերապատրաստումների իրականացում քրեակատարողական և բժշկական անձնակազմի համար) և դրանց իրականացման հստակ ժամկետներ: Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա ապահովել ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնավնասումների և ինքնասպանությունների կանխարգելումը: Այս համատեքստում ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնասպանությունների և ինքնավնասումների պայքարի շրջանակներում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից քրեակատարողական ծառայողների 2020 թվականի վերապատրաստումների ծրագրերում արդեն իսկ ներառվել է «Կյանքի իրավունք» թեմայով դասընթաց (երկու ակադեմիական ժամ), որին մասնակցել են վերապատրաստվող բոլոր ծառայողները:

Բացի այդ, ինքնասպանության ռիսկի խմբին դասվող ազատությունից զրկված անձանց կյանքից զրկելու միջոցներին անհրաժեշտ ժամանակահատվածով հասանելիությունը սահմանափակելու շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի



«Արդարադատության նախարարություն»

օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման մեջ լրացում կատարելու նպատակով մշակվել և շրջանառվել է համապատասխան նախագիծ, որի վերաբերյալ կարծիքների ամփոփումից հետո այն կընդունվի՝ երաշխավորելով ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնասպանությունների և ինքնավնասումների դեմ պայքարի ևս մեկ մեխանիզմի առկայությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակվել է ՀՀ գլխավոր դատախազի «ՀՀ զինված ուժերում և քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերի արագ և թափանցիկ քննության չափորոշիչներ սահմանելու մասին» հրամանի նախագիծը, որի ընդունմամբ կերաշխավորվի քրեակատարողական հիմնարկներում մահվան կոնկրետ դեպքերի հիմքում ընկած հանգամանքների բացահայտումը, ինչպես նաև այդ դեպքերի կապակցությամբ իրականացվող քննության արդյունավետությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 41

Ենթակետ 1. Իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն:

Ենթակետ 2. Ուսումնասիրության հիման վրա մշակվել և ներդրվել են ազատությունից զրկված անձանց քրեակատարողական հիմնարկ ընդունելիս նրանց հոգեկան առողջական վիճակի գնահատման և դրա վատթարացման կանխարգելման, ինչպես նաև դրանց կապակցությամբ սկրինինգային հետազոտությունների իրականացման ծրագրեր:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Հոգեկան առողջական վիճակի գնահատման և դրա վատթարացման կանխարգելման կապակցությամբ սկրինինգային հետազոտությունների իրականացման վերաբերյալ կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն, որի հիման վրա առանձնացվել են որոշ հարցարաններ, որոնք կարող են օգտագործվել նաև ազատությունից զրկված անձանց շրջանում: Սակայն հարկ է նշել, որ հաշվի առնելով խնդրո առարկա հիմնախնդիրների նեղ մասնագիտական բնույթը դրանց համակարգային մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը՝ սկրինինգային գործիքների վերաբերյալ առավել խորը ուսումնասիրությունը, դրանց մշակումը և ներդնումը դիտարկվում է «Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում մշակված՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի համատեքստում: Մասնավորապես՝ Ռազմավարությամբ սահմանված միջոցառումների շրջանակներում նախատեսվում է քրեակատարողական հիմնարկներում հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման կանխարգելման և ռիսկերի գնահատման գործիքակազմի մշակում և ներդնում: Ըստ այդմ՝ Եվրոպայի խորհրդի վերոնշյալ ծրագրի շրջանակներում հաշվետու ժաանակահատվածում իրականացվել է գնահատում և ուսումնասիրություն՝ ազատությունից զրկված անձանց քրեակատարողական հիմնարկ ընդունելիս հոգեկան առողջական վիճակի գնահատման և դրա վատթարացման կանխարգելման, ինչպես նաև դրանց կապակցությամբ սկրինինգային հետազոտությունների իրականացման ծրագրերի վերաբերյալ: Միջազգային չափանիշների և մասնագիտական ուսումնասիրությունների հիման վրա մշակված ծրագրերը/գործիքները կքննարկվեն շահագրգիռ մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ և դրանից հետո միայն կներդրվեն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է



- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 42 (շարունակական)

Ենթակետ 1. Վերանայվել է քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների հաստիքները՝ հնարավորինս համապատասխանեցնելով այնտեղ պահվող ազատությունից զրկված անձանց լրակազմին, ինչպես նաև անհրաժեշտ հոգեբանական աջակցության ծավալին՝ նախապես գնահատելով մատուցվող ծառայությունների կարիքները:

Ենթակետ 2. Մշակվել են քրեակատարողական հիմնարկներում հոգեբանական ծառայության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար մեթոդական ուղեցույցներ:

Ենթակետ 3. Իրականացվել է հոգեբանների մասնագիտական վերապատրաստում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) Ազատությունից զրկված անձանց որակյալ հոգեբանական օգնության տրամադրումը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև քրեակատարողական հիմնարկներում հոգեբանների հաստիքների անհրաժեշտ քանակով: Այս առումով ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ ներկայումս իրականացվում է ընդհանուր առմամբ քրեակատարողական ծառայողների հաստիքների վերանայման և օպտիմալացման գործընթացը, որի հիմքում ընկած են քրեակատարողական համակարգի կարիքների գնահատումը և տարբեր բաժինների վրա դրված լիազորությունների հնարավոր կրկնությունների բացառումը, ու ըստ այդմ՝ հնարավորինս օպտիմալ լուծումների որոնումը: Հարկ է նշել, որ հոգեբանների հաստիքների վերանայումը կիրականացվի քրեակատարողական հիմնարկների կարիքների գնահատման համատեքստում՝ քրեակատարողական ծառայության բոլոր հաստիքների վերանայման, օպտիմալացման գործընթացի շրջանակներում՝ դրանց քանակը հնարավորինս համապատասխանեցնելով յուրաքանչյուր քրեակատարողական հիմնարկում պահվող ազատությունից զրկված անձանց լրակազմին, ինչպես նաև անհրաժեշտ հոգեբանական աջակցության ծավալին:

2) Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հետ իրականացվող հոգեբանական աշխատանքների արդյունավետ իրականացման համար մշակվել է մեթոդական ուղեցույցի նախագիծը, որը կդիտարկվի նաև «Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրի շրջանակներում՝ ուսումնասիրվելով ընդգրկված տեղական և միջազգային փորձագետների կողմից, որից հետո ամբողջությամբ կհաստատվի: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելման 2021-2022 թվականների ռազմավարությունը և դրա իրականացման 2021-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» «Արդարադատության նախարարի հրամանի շրջանակներում նախատեսվում է բժշկական և ոչ բժշկական անձնակազմի կողմից հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնավնասման և ինքնասպանության դեպքերի հայտնաբերման, գնահատման, ինչպես նաև ինքնավնասման և ինքնասպանության հակում ունեցող անձանց բուժման ուղեցույցների մշակում, որը կկատարվի նույն հրամանով սահմանված ժամկետում:



«Արդարադատության նախարարություն»

3) Նշված հրամանով նախատեսվում է նաև հոգեկան առողջության վիճակի գնահատման, ինքնասպանության և ինքնավնասման թեմաներով մշակել համապատասխան ծրագրեր և ըստ այդմ՝ իրականացնել վերապատրաստումներ՝ ինչպես բժշկական, այնպես էլ ոչ բժշկական անձնակազմի շրջանում, որը կիրականացվի սահմանված կարգով:

Հատկանշական է նաև, որ հոգեբանական աշխատանքի տեսանկյունից կարևորելով առաջին հերթին ազատությունից զրկված անձանց շրջանում ինքնասպանությունների և ինքնավնասումների կանխարգելումը՝ քրեակատարողական ծառայողների 2020 թվականի վերապատրաստումների ծրագրերում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներառվել է «Կյանքի իրավունք» թեմայով դասընթացը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 45

Ենթակետ 1. Մշակվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթ.

Ենթակետ 2. Փաթեթի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ.

Ենթակետ 3. Փաթեթը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում տրամադրվող փորձագիտական աջակցության շնորհիվ մշակվել է «Պրոբացիայի մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումների նախագծերի փաթեթի լրամշակված տարբերակը (այսուհետ՝ Փաթեթ):

Փաթեթը 2020 թվականի հուլիսի 27-ին ուղարկվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը, ինչպես նաև տեղադրվել է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (հղումը՝ <https://www.e-draft.am/projects/2625>): Փաթեթի վերաբերյալ Ծրագրի շրջանակներում ձևավորված բազմաշահառու աշխատանքային խմբի շրջանակներում իրականացվել են մի շարք քննարկումներ: Փաթեթի լրամշակված տարբերակը ներկայացվել է նաև Վարչապետի աշխատակազմ:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականի մարտ ամսին նախատեսվում է անցկացնել ևս մեկ հանրային քննարկում, որի ընթացքում կհամադրվեն նաև 2020 թվականի դեկտեմբերի 9-ին և 2021 թվականի փետրվարի 11-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի և Փաթեթի կարգավորումները: Անհրաժեշտության դեպքում Փաթեթը կլրամշակվի:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 46

- Ենթակետ 1.** Մշակվել է «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը.
- Ենթակետ 2.** Նախագծի վերաբերյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ.
- Ենթակետ 3.** Նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել և 2020 թվականի ապրիլի 24-ին ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-196-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք): Օրենքով, ի թիվս այլնի, առաջարկվում է խափանման բոլոր միջոցները դիտել որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոցներ՝ հնարավորություն ընձեռելով դատարաններին անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժել, եթե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներին հնարավոր է հասնել մեղադրյալի նկատմամբ այլ խափանման միջոցների կիրառմամբ՝ այլ խափանման միջոցներ ընտրելու հարցի լուծումը թողնելով վարույթն իրականացնող մարմնի իրավասությանը:

Զուգահեռաբար հարկ է արձանագրել, որ 2020 թվականի մայիսի 21-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծին (այսուհետ՝ Նախագիծ) և սահմանված կարգով ներկայացրել ՀՀ Ազգային ժողով: ՀՀ Ազգային ժողովը 2021 թվականի փետրվարի 11-ին առաջին ընթերցմամբ ընդունել է Նախագիծը: Նախագծի նորարարություններից մեկն այլընտրանքային խափանման միջոցների համակարգի ներդրումն ու կիրառման ընթացակարգերի արմատական բարեփոխումն է: Այս համատեքստում հարկ է նկատել, որ Նախագծի հեղինակները նախատեսել են այնպիսի նոր խափանման միջոցներ, ինչպիսիք են տնային կալանքը և վարչական հսկողությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 47

Ենթակետ 1. Գնահատվել է Պրոբացիայի ծառայության առկա կարգավիճակը և պրոբացիայի ծառայողներին վերապահված սոցիալական երաշխիքների առկա համակարգը:

Ենթակետ 2. Ներկայացվել է առաջարկություն Պրոբացիայի ծառայության կարգավիճակի և պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգի փոփոխման նպատակահարմարության վերաբերյալ և, ըստ անհրաժեշտության, մշակվել է իրավական ակտի նախագիծ:

Ենթակետ 3. Պրոբացիայի ծառայությունը համալրվել է սոցիալական-հոգեբանական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հաստիքներով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) Գնահատվել է Պրոբացիայի ծառայության առկա կարգավիճակը և պրոբացիայի ծառայողներին վերապահված սոցիալական երաշխիքների առկա համակարգը և ներկայացվել առաջարկություն: Ըստ ներկայացված առաջարկության՝ մշակվել է «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով առաջարկվում է վերանայել թե՛ Պրոբացիայի ծառայության կարգավիճակը, թե՛ պրոբացիայի ծառայողների սոցիալական երաշխիքների համակարգը:

2) 2020 թվականի ընթացքում Պրոբացիայի ծառայության շուրջ 10 թափուր հաստիք համալրվել է: Թափուր հաստիքի համար հիմնական պահանջվող մասնագիտությունները եղել են կրիմինալոգիան, հոգեբանությունը և սոցիալական աշխատանքը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակի (ապա՝ կարանտին) և ռազմական դրության հաստատմամբ պայմանավորված՝ Պրոբացիայի ծառայությանը սոցիալական-հոգեբանական աշխատանքների իրականացման համար նոր հաստիքների համալրման առնչությամբ պետական բյուջեից հատկացումներ չեն եղել: 2021 թվականի ընթացքում կշարունակվեն քայլեր ձեռնարկվել պետական բյուջեից ֆինանսական հատկացումների ներգրավմամբ Պրոբացիայի ծառայությունը սոցիալական-հոգեբանական աշխատանքների իրականացման համար նոր հաստիքներով համալրելու ուղղությամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԵԾ ՄԱՍԱՄԲ**
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 48 (շարունակական)

Ենթակետ 1. Իրականացվել է կարիքների գնահատում:

Ենթակետ 2. Պրոբացիայի ծառայությունը վերազինվել է անհրաժեշտ տեխնիկական միջոցներով:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Իրականացվել է կարիքների գնահատում: Միջազգային, պետական և հասարակական կառույցների հետ համագործակցության, ինչպես նաև ՀՀ կառավարության 20.08.2020 թվականի թիվ 1373-Ա որոշման ընդունման արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայությունը վերազինվել է տրանսպորտային, համակարգչային անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և համալրվել բավարար չափով գրասենյակային կահույքով:

Ներկայումս Պրոբացիայի ծառայության բոլոր նստավայրերը հագեցված են անհրաժեշտ գույքով, համակարգիչներով և համակարգչային տեխնիկայով: Հարկ է նշել, որ Պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի հինգ աշխատասենյակ վերանորոգվել և համալրվել է նոր կահույքով:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 49

Ենթակետ 1. Մշակվել են «ՀՀ պրոբացիայի ծառայողի գործնական ձեռնարկ», «ՀՀ պրոբացիայի ծառայության ղեկավար կազմի գործնական ձեռնարկ» գործնական ուղեցույցները:

Ենթակետ 2. Մշակվել է Պրոբացիայի ծառայության անձնակազմի վերապատրաստման դասընթացների մեթոդական ձեռնարկը՝ որպես ապագայում անցկացվող մասնագիտական վերապատրաստումների վարման ուղեցույց:

Ենթակետ 3. Մշակվել է վերապատրաստման դասընթացների անցկացման նոր մեթոդաբանություն:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1) «Փրոջեքթ Հարմոնի Ինթերնեշնլ» կազմակերպության հայկական մասնաճյուղի հետ համագործակցության արդյունքում մշակվել է՝

- «ՀՀ պրոբացիայի ծառայողի գործնական ձեռնարկ» գործնական ուղեցույցը,
- «ՀՀ պրոբացիայի ծառայության ղեկավար կազմի գործնական ձեռնարկ» գործնական ուղեցույցը,
- Պրոբացիայի ծառայության անձնակազմի վերապատրաստման դասընթացների մեթոդական ձեռնարկը՝ որպես ապագայում անցկացվող մասնագիտական վերապատրաստումների վարման ուղեցույց: Ուղեցույցը ևս ապահովում է պրոբացիայի ծառայողների վերապատրաստման դասընթացների անցկացման մեթոդաբանական նոր հիմքեր: մշակվել են:

2) Պրոբացիայի ծառայության անձնակազմի վերապատրաստման դասընթացների մեթոդական ձեռնարկը՝ որպես ապագայում անցկացվող մասնագիտական վերապատրաստումների վարման ուղեցույց, մշակվել է:

3) ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում մշակվել է պրոբացիայի ծառայողների վերապատրաստման դասընթացների անցկացման նոր մեթոդաբանություն: Նոր մեթոդաբանությամբ մշակված մոդուլներով վերապատրաստման դասընթացները Պրոբացիայի ծառայությունում իրականացվելու են ոլորտային փորձագետների կողմից: Նոր մեթոդաբանությամբ մշակված վերապատրաստման դասընթացների միջոցով պրոբացիայի ծառայողները ձեռք կբերեն միջազգային չափանիշներին համապատասխան փորձառություն, որը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության համակարգում ունենալ ճկուն և կայացած Պրոբացիայի ծառայություն: Ծրագրի շրջանակներում նշված մոդուլները կկիրառվեն 2021-2022 թվականների ընթացքում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- o ԿԱՏԱՐՎԱԾ Է
- o Կատարված է մեծ մասամբ
- o Կատարված է մասնակի



- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 50

Ենթակետ 1. Մշակվել և իրականացվել է **e-probation** համակարգի ծրագրային ապահովումը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) էլեկտրոնային կառավարման համակարգի (այսուհետ՝ e-probation) մշակման և ներդրման հարցերի վերաբերյալ իրականացվում է գնահատման առաքելություն, որը միտված է Պրոբացիայի ծառայության գործառույթային ու ցանցային կարողությունների հզորացմանն աջակցելուն:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ Ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպվել շահագրգիռ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների, Դատական դեպարտամենտի, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշմամբ պայմանավորված՝ շահագրգիռ որոշ մարմինների հետ հանդիպումն օբյեկտիվորեն հնարավոր չի եղել կազմակերպել:

Հաշվի առնելով այն, որ նոր կորոնավիրուսային վարակի պատճառով Ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների 6-ամսյա պլանը փոփոխվել է, ինչպես նաև այն, որ գնահատման առաքելության շրջանակներում որոշ մարմինների հետ հանդիպումներ անցկացնելն օբյեկտիվորեն հնարավոր չի եղել, գնահատման հիման վրա կազմվող զեկույցը դեռևս գտնվում է մշակման փուլում: Գնահատումն իրականացնելուց հետո կհայտարարվի մրցույթ՝ e-probation համակարգի թվայնացումն իրականացնելու, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումները ձեռք բերելու նպատակով: Այսինքն՝ հաշվետու տարում ստեղծվել է անհրաժեշտ նախադրյալ e-probation համակարգի տեխնիկական առաջադրանքի մշակման և ծրագրային ապահովման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- **ԿԱՏԱՐՎԱԾ ՉԷ**



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 52

Ենթակետ 1. Մշակվել է պրոբացիայի շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքը:

Ենթակետ 2. Պրոբացիայի շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքը փորձարկվել է պիլոտային ծրագրի շրջանակներում:

Ենթակետ 3. Փորձարկման արդյունքների հիման վրա պրոբացիայի շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքը կատարելագործվել է:

Ենթակետ 4. Պրոբացիայի շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքը հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում և մարզային մարմիններում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Պրոբացիայի ծառայության շահառուի ռիսկի նախնական գնահատման գործիքը (proxy tool) մշակվել է, պիլոտային ծրագրի շրջանակներում փորձարկվելուց հետո փորձարկման արդյունքների հիման վրա կատարելագործվել է, ըստ այդմ՝ ՀՀ արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 20-ի N 1233-Ա հրամանով հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության մարմիններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 53

Ենթակետ 1. Պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում և մարզային մարմիններում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Պրոբացիայի շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման գործիքը հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում և մարզային մարմիններում:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում տրամադրվող փորձագիտական աջակցության շնորհիվ արդեն իսկ պրակտիկ փորձի հաշվառմամբ վերանայվել է պրոբացիայի շահառուների ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման խորը գործիքը: Առաջիկայում կապահովվեն նաև ծրագրային լուծումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- **ԿԱՏԱՐՎԱԾ Է**
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 54

Ենթակետ 1. Պրոբացիայի անչափահաս շահառուների դիսկերի և կարիքների գնահատման գործիքը հաստատվել և ամբողջությամբ կիրառվում է Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնում և մարզային մարմիններում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում տրամադրվող փորձագիտական աջակցության շնորհիվ արդեն իսկ վերանայվել է պրոբացիայի շահառուների դիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման խորը գործիքը: Վերանայման արդյունքում փոփոխության է ենթարկվել ոչ միայն գործիքի առկա տեսքը և ֆունկցիոնալ կարողությունները, այլև մշակվել է պրոբացիայի անչափահաս շահառուների դիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքը (այսուհետ՝ Մշակված գործիքներ)՝ հաշվի առնելով չափահաս և անչափահաս շահառուների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները:

Մշակված երկու գործիքները նախևառաջ քննարկվել են Արդարադատության նախարարությունում և Պրոբացիայի ծառայությունում, ապա նաև Ծրագրի շրջանակներում ձևավորված՝ պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից բաղկացած բազմաշահառու աշխատանքային խմբում: Հատկանշական է, որ Մշակված գործիքների վերաբերյալ փորձագիտական կարծիք է ներկայացրել նաև Ծրագրի շրջանակներում ներգրավված միջազգային փորձագետը: 2020 թվականի օգոստոսի 10-ին տեղի ունեցած առցանց հանդիպման շրջանակներում բազմաշահառու աշխատանքային խմբի ներկայացուցիչները ներկայացրել են մի շարք առաջարկներ, որոնք միտված են եղել Մշակված գործիքները կատարելագործելուն: Քննարկման արդյունքներով Արդարադատության նախարարության կողմից որդեգրվել է Մշակված գործիքները «մեկ պատուհան» սկզբունքով ներդնելու մոտեցումը՝ մեկ գործիքում (այսուհետ՝ Միասնական գործիք) ներառելով և՛ պրոբացիայի չափահաս շահառուների, և՛ անչափահաս շահառուների դիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքային հատվածը, և՛ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով պրոբացիայի շահառուի վերաբերյալ կազմվող զեկույցի էլեկտրոնային, ալգորիթմային տարբերակը:

Ներկա դրությամբ առկա են Մշակված գործիքների փաստաթղթային տարբերակները, որոնք արդեն իսկ հանձնվել են Ծրագրի շրջանակներում ընդգրկված տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետին՝ թվայնացումն ապահովելու նպատակով: Միասնական գործիքը ներկայումս թվայնացման փուլում է. թվայնացումից հետո այն փորձարկվելու է պիլոտային ծրագրի շրջանակներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**



- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 55

Ենթակետ 1. Մշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցի հիմքում դրվող հանգամանքների գնահատման էլեկտրոնային գործիք:

Ենթակետ 2. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցի հիմքում դրվող հանգամանքների գնահատման էլեկտրոնային գործիքը փորձարկվել է:

Ենթակետ 3. Փորձարկման հիման վրա գործիքը կատարելագործվել է և ամբողջությամբ գործարկվում է Պրոբացիայի ծառայությունում:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

Արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում տրամադրվող փորձագիտական աջակցության շնորհիվ արդեն իսկ վերանայվել և կատարելագործվել է պրոբացիայի շահառուների ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման խորը գործիքը: Վերանայման արդյունքում փոփոխության է ենթարկվել ոչ միայն գործիքի առկա տեսքը և ֆունկցիոնալ կարողությունները, այլև մշակվել է պրոբացիայի անչափահաս շահառուների ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքը (այսուհետ՝ Մշակված գործիքներ)՝ հաշվի առնելով չափահաս և անչափահաս շահառուների հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները: Մշակված գործիքներն արտացոլվել են տեխնիկական բնութագրերում: 2020 թվականի օգոստոսի 10-ին տեղի ունեցած առցանց հանդիպման շրջանակներում բազմաշահառու աշխատանքային խմբի ներկայացուցիչները ներկայացրել են մի շարք առաջարկներ, որոնք միտված են եղել Մշակված գործիքները կատարելագործելուն: Քննարկման արդյունքներով Արդարադատության նախարարության կողմից որդեգրվել է Մշակված գործիքները «մեկ պատուհան» սկզբունքով ներդնելու մոտեցումը՝ մեկ գործիքում ներառելով և՛ պրոբացիայի չափահաս շահառուների, և՛ անչափահաս շահառուների ռիսկերի և պահանջմունքների (կարիքների) գնահատման գործիքային հատվածը, և՛ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով պրոբացիայի շահառուի վերաբերյալ կազմվող զեկույցի էլեկտրոնային, ալգորիթմային տարբերակը:

Մշակված գործիքների փաստաթղթային տարբերակները ներկայացվել էին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի մասնագետին՝ թվայնացման նպատակով: Միասնական գործիքը ներկայումս թվայնացման փուլում է. թվայնացումից հետո այն փորձարկվելու է պիլոտային ծրագրի շրջանակներում:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**



- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 56

Ենթակետ 1. Մշակվել և ներկայացվել է առաջարկություն պրոբացիայի ծառայողներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների կազմման համար փոխհատուցում տրամադրելու մոդելի ընտրության վերաբերյալ:

Ենթակետ 2. Ներդրվել է պրոբացիայի ծառայողներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցների կազմման համար փոխհատուցում տրամադրելու մոդել:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) աշխատակիցներին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ զեկույցների (այսուհետ՝ Ձեկույց) կազմման համար փոխհատուցում տրամադրելու մոդելի ընտրության հարցում ամենամսյա 20.000 (քսան հազար) ՀՀ դրամի չափով հավելավճար տրամադրելու վերաբերյալ առաջարկություն: Նշված առաջարկության վերաբերյալ ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության բացասական կարծիքը, որով առաջարկվել է Ծառայության կողմից Ձեկույցների կազմման համար փոխհատուցում տրամադրելու մոդելի ընտրության հարցում դիտարկել գործատուի անհատական իրավական ակտի համաձայն աշխատողին գործուղելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորությունը և ընթացակարգը՝ հաշվի առնելով գործուղումների դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված երաշխիքները և հատուցումները:

Հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը, տնտեսական ռեսուրսների ծախսման առաջնահերթությունները, նպատակայնությունը, թիրախները և այն, որ առաջարկը չի հաստատվել միջնաժամկետ ծախսային ծրագրով՝ նախատեսվում է դիտարկել ընթացիկ տարում առավել օպտիմալ եղանակով հատուցման ապահովման կառուցակարգերի նախատեսման հնարավորությունը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 57

- Ենթակետ 1.** Մշակվել են պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման միջոցառումներ և ծրագրեր:
- Ենթակետ 2.** Մշակված վերասոցիալականացման միջոցառումները և ծրագրերը փորձարկվել են պիլոտային ծրագրի շրջանակներում:
- Ենթակետ 3.** Մշակվել է վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի անցկացման նոր մեթոդաբանություն:
- Ենթակետ 4.** Սահմանվել են վերստուգելի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան ստուգել պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի արդյունավետության աստիճանը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

- o ՀՀ արդարադատության նախարարության «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալների շրջանում իրականացվում է «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագրի արդյունավետության մասին են վկայում ինչպես դրա անմիջական շահառուները՝ դատապարտյալները, այնպես էլ նրանց հետ հոգեբանական աշխատանքներ տանող աշխատակիցները:
- o Հաշվի առնելով քրեակատարողական համակարգում ունեցած փորձառությունը՝ ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) և ՊՈԱԿ-ի համատեղ ջանքերով Ծրագրի մասնակից են դարձել նաև պրոբացիայի շահառուները: 2020 թվականի ընթացքում Ծրագրին մասնակցել է պրոբացիայի 30 շահառու: Ծրագրի շրջանակներում պրոբացիայի շահառուների համար իրականացվել են հետևյալ դասընթացները՝ օտար լեզու (անգլերեն), համակարգչային հմտություններ, բիզնես գրագիտություն, դեկորատիվ-կիրառական արվեստ/վիտրաժ մանրանկարչություն:
- o Հատկանշական է, որ պրոբացիայի շահառուների կարիքների գնահատման արդյունքում 2021 թվականին նախատեսվում է Ծրագրում ներառել «Վարսավիրական հմտություններ» դասընթացը: Դասընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ պարագաներն առկա են:
- o ՀՀ արդարադատության նախարարության, Պրոբացիայի ծառայության և ՊՈԱԿ-ի միջև տեղի ունեցած մասնագիտական քննարկումների հիման վրա նախատեսվում է իրականացնել կարճաժամկետ մասնագիտական վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ, որոնց միջոցով պրոբացիայի շահառուն կստանա մասնագիտական որակավորում (օրինակ՝ զոդում, սալիկապատում, խոհարարություն): Նշված դասընթացները կիրականացվեն ըստ բյուջետային հատկացումների, իսկ օրենքով չարգելված միջոցների առկայության դեպքում՝ նաև դրանց միջոցով: Հարկ է նկատել, որ նշված միջոցառումները փորձարկվելու են պիլոտային ծրագրի շրջանակներում:
- o ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է «Ընտանեկան բռնության կանխարգելում/հույզերի կառավարում» դասընթացի մոդուլը: Նշված դասընթացը 2020 թվականի օգոստոսից իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում: Հաշվի առնելով արդեն իսկ իրականացված դասընթացի մոդուլի կատարման փորձառությունը՝ այն կլրամշակվի և հաջորդ տարի կիրականացվի նաև պրոբացիայի շահառուների շրջանում:



ՀՀ արդարադատության նախարարություն

- Սոցիալական ապահովության ծրագրերի շրջանակներում Պրոբացիայի ծառայության շահառուներին տրամադրվել է սնունդ, հագուստ, ինչպես նաև հիգիենայի պարագաներ: Կարևոր է ընդգծել, որ Պրոբացիայի ծառայությունը պրոբացիայի որոշ շահառուների ապահովել է կացարաններով:
- Իրականացվել են հոգեբանական և վարքաբանական խմբային և անհատական աշխատանքներ՝ տրամադրելով հոգեբանական աջակցություն և իրավական խորհրդատվություն: Բացի այդ, Պրոբացիայի շահառուներն ուղղորդվել են հոգեբանական աջակցման կենտրոններ, բժշկական և այլ հաստատություններ:
- Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ 2019 թվականի հոկտեմբեր ամսից ՀՀ արդարադատության նախարարության և Եվրոպայի խորհրդի կողմից համատեղ իրականացվում է «Աջակցություն Հայաստանում պրոբացիայի ծառայության զարգացմանը» ծրագիրը: Նշված ծրագրի աշխատանքային պլանում, ի թիվս այլ միջոցառումների, նախատեսվում է նաև 2021-2022թթ. ընթացքում պրոբացիայի շահառուների համար մշակել և ներդնել վերասոցիալականացման նոր միջոցառումներ, որոնք թույլ կտան առավել արդյունավետ եղանակով իրականացնել պրոբացիայի շահառուների հետ աշխատանքը: Հարկ է արձանագրել, որ նշված միջոցառումները նախ՝ փորձարկվելու են պիլոտային ծրագրի շրջանակներում, ապա գնահատման հիման վրա ամբողջությամբ կիրականացվեն պրոբացիայի շահառուների շրջանում:
- Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի անցկացման նոր մեթոդաբանությունը մշակվել է:
- Մշակվել են Պրոբացիայի ծառայության վերասոցիալականացման միջոցառումների և ծրագրերի գնահատման համար մշակված վերստուգելի չափանիշները:

ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.

- Կատարված է
- Կատարված է մեծ մասամբ
- **ԿԱՏԱՐՎԱԾ Է ՄԱՍՆԱԿԻ**
- Կատարված չէ



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ 58 (շարունակական)

Ենթակետ 1. Մշակվել և իրականացվել են հասարակության շրջանում քրեական ենթամշակույթի նկատմամբ զրո հանդուրժողականության ապահովմանն ուղղված իրազեկման ծրագրեր:

Ենթակետ 2. Մշակվել և իրականացվել են իրազեկման ծրագրեր, որոնց հիման վրա անձինք (այդ թվում՝ դատապարտյալները և պրոբացիայի շահառուները) պարբերաբար տեղեկացվում են պետության կողմից քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում իրականացվող միջոցառումների, ինչպես նաև պատիժը կատարող կամ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս իրենց իրավունքների վերաբերյալ:

Ենթակետ 3. Մշակվել և իրականացվել են պատժից ազատվելուց հետո հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխմանը և հանդուրժողականության աստիճանի բարձրացմանն ուղղված իրազեկման ծրագրեր՝ հիմքում ունենալով դատապարտյալների վերաինտեգրման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Ենթակետ 4. Արդարադատության շղթայում ընդգրկված մարմինների միջև արդյունավետ հաղորդակցության և քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում վարվող պետական քաղաքականության գաղափարախոսության ամրապնդման նպատակով պարբերաբար կազմակերպվել են աշխատաժողովներ:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

o Քրեական ենթամշակույթին առնչվող արարքները քրեականացնող՝ 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-87-Ն օրենքն ուժի մեջ մտնելու պահից սկսած՝ ՀՀ արդարադատության նախարարությունը գործընկեր կառույցների հետ կազմակերպել է քննարկումներ՝ միտված օրենսդրական փոփոխությունները կյանքի կոչելուն: Քրեական ենթամշակույթին առնչվող հանցավոր արարքներով իրավակիրառ պրակտիկայի միասնականության, ինչպես նաև հանրային իրազեկման ապահովման նպատակով աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ: Արդյունքում՝ մշակվել է «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը» վերտառությամբ գիտագործնական մեկնաբանությունը, որը երաշխավորվել է տպագրության ՀՀ արդարադատության ակադեմիայի գիտական խորհրդի կողմից և ուղարկվել շահառու բոլոր գերատեսչություններին: Նշված ուղեցույց-մեկնաբանությունները հրապարակվել են նաև ՀՀ արդարադատության ակադեմիայի պաշտոնական կայքում, որը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://justiceacademy.am/#1954>: Ավելին, նշված թեմայով ՀՀ արդարադատության ակադեմիայի ուսումնական ծրագրով նաև նախատեսվել է առանձին դասընթաց:

ՀՀ արդարադատության նախարարությունը և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը լուսաբանել, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով հասարակությանն իրազեկել է քրեական ենթամշակույթի դեմ պայքարի և դրա գործիքակազմի մասին (շուրջ 10 հրապարակում):



«Արդարադատության նախարարություն»

- «Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության տարածքային մարմինների կողմից 2020 թվականի ընթացքում պրոբացիայի շահառուների հետ պարբերաբար իրականացվել են իրազեկման միջոցառումներ՝ վերահսկողությունն իրականացնող մարմինների հետ հարաբերակցվելիս վերջիններիս իրավունքների վերաբերյալ:
- Հայաստանի Հանրային ռադիոյի «Դպրություն» հաղորդաշարի շրջանակներում հաղորդումների մի ամբողջ շարքի միջոցով լուսաբանվել է «Արդարադատության նախարարի հրամանի հիման վրա «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Արդարադատության նախարարության «Արմավիր», «Աբովյան», «Վարդաշեն», «Սևան» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում, ինչպես նաև «Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Երևանի գրասենյակում իրականացվող «Իրավախախտում կատարած անձանց գեղագիտական դաստիարակություն և կրթություն» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մասին, որին մասնակցում են շուրջ 110 դատապարտյալ և պրոբացիայի շահառու: Հաղորդաշարի շրջանակներում լուսաբանվել է նաև 2019 թվականի սեպտեմբերից «Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում մինչև 19 տարեկան ազատազրկված անձանց համար իրականացվող Հանրակրթական հիմնական ընդհանուր պետական ծրագիրը, որին ներկայումս մասնակցում են ազատազրկված 11 անձ:
- Նկարահանվել է «Անչափահասները ճաղերից այն կողմ» անվանումը կրող տեսաֆիլմ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել ազատազրկված անչափահասների վերասոցիալականացման վերաբերյալ առկա հիմնախնդիրներին և դրանց լուծմանը:
- «Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակում DVV International Armenia-ի կողմից «Հանրային լրագրության ակումբ (ՀԼԱ)» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է «Կրթություն՝ հանուն փոփոխությունների» թեմայով լրագրողական մրցույթը:
- Հանրային քննարկումների ընթացքում (այդ թվում՝ սեմինարներ, հարցազրույցներ, համաժողովներ և այլն) անդրադարձ է կատարել վերասոցիալականացման ծրագրերին մասնակցության արդյունքում ազատազրկված անձանց վարքի փոփոխմանը, նոր արժեհամակարգի ձևավորմանը և կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներին (ինչպես ակադեմիական (հայոց լեզու, գրականություն, օտար լեզուներ՝ ռուսերեն, անգլերեն), այնպես էլ գեղագիտական ոլորտի (խեցեգործություն, գծանկար, մանրանկարչություն)՝ այդպիսով փորձելով խթանելով հասարակություն վերադարձած դատապարտյալների նկատմամբ հանրային դիրքորոշման փոփոխմանը և հանրային հանդուրժողականության բարձրացմանը:
- Կազմակերպվել են մի շարք հանդիպումներ արդարադատության շրջայում ընդգրկված մարմինների միջև՝ թիրախավորելով քրեակատարողական և պրոբացիայի ոլորտին առնչվող առանցքային հարցերը՝ քրեակատարողական հիմնարկներում որպես խափանման միջոց ընտրված կալանքը կամ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների հիմքով դատապարտյալներին պատիժը կրելուց ազատելու կամ կալանավորված անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու կամ փոփոխելու գործընթացի կազմակերպման ընթացակարգերի մշակմանը:
- Կազմակերպվել են մի շարք հանրային քննարկումներ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարական գաղափարախոսությունը կյանքի կոչող «Արդարադատության նախարարության» և «Արդարադատության նախարարության» քրեակատարողական նոր օրենսգրքերի նախագծերին:



ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ (2020 թվական).

- ԿԱՏԱՐՎԱԾ Է
- Կատարված է մեծ մասամբ
- Կատարված է մասնակի
- Կատարված չէ